«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2012 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N ՀՀ-Կ-08/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և դպրոցում տեղադրում՝ 1388450 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«10» օգոստոսի 2012թ.

« ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում »

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի երկու դասարանները անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Կոտայքի մարզ Չարենցավան քաղաք, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.388.450,00 դրամ: |

2

| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ օգոստոսի 01-ից մինչեւ 2012թ. նոյեմբերի 01-ը |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի երկու դասարանների համար ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի համաձայն գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 1.388.450,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության և կրթության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական
Արմինա Դարբինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 633 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊՅՈՏՐ ՉԱՅԿՈՎՍԿՈՒ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ 3-ՐԴ ՓՈՒԼ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 16-ի N 3/3.8-1/10708-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 15-ի N 02/4966-12, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2012 թվականի օգոստոսի 17-ի N 01/3.1/3312-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 15-ի N ՎՄ/3-4/8631-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 5130000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի Պյոտր Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի կահավորման 3-րդ փուլ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2012 թվականի օգոստոսի 3-ին կնքված՝ N ՀՀ-Կ-09/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և Երևան քաղաքի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցում տեղադրում՝ 5130000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«05» մարտի 2012թ.

# « ՀՀ Երևան քաղաքի Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի կահավորման 3-րդ փուլ »

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Երևան քաղաքի Պ.Չայկովսկու երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի դահլիճները փափուկ աթոռներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Երևան քաղաք, կրթության բնագավառ |



| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 5.130.000,00 ՀՀ դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Երևան քաղաքի Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ օգոստոսի 03-ից մինչեւ 2012թ. նոյեմբերի 03-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից դպրոցի երկու դահլիճների համար 300 փափուկ աթոռների պատրաստում, գնում, տեղափոխում և անհատույց հանձնում՝ 5.130.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Մշակույթի նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 634 -Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ «ՕԿՏԵՏ» ԹԻՎ 6 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 8-ի N 3/3.8-1/10408-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 6-ի N 02/4792-12, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2012 թվականի օգոստոսի 8-ի N 01/3.1/3224-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 8-ի N ՎՄ/3-4/8443-12 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 7-ի N 01/3756-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի Շիշյանի անվան «Օկտետ» թիվ 6 երաժշտական դպրոցի շենքի կառուցում»՝ 447920 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «ԿԱՆԱԿԱ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2012 թվականի հուլիսի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 439137 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Տեխպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06909421) 2012 թվականի հուլիսի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության իրականացում՝ 6587 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երանգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05507067) 2012 թվականի հուլիսի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության իրականացում՝ 2196 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից
«2» օգոստոսի 2012թ

# Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Գյումրի քաղաքի Շիշյանի անվան «Օկտետ» թիվ 6 երաժշտական դպրոցի շենքի կառուցում

## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերակառուցել Գյումրի քաղաքի Շիշյանի անվան «Օկտետ» թիվ 6 երաժշտական դպրոցի նոր շենքը՝ նպաստելով դպրոցում ուսանող 232 աշակերտների կրթական պայմանների բարելավմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Գյումրի, Նիզամի 2:<br>Բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 447,920 ԱՄՆ դոլարրին համարժեք ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Շիշյանի անվան «Օկտետ» թիվ 6 երաժշտական դպրոց ՊՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 31.07.2012 – 31.08.2013 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել Գյումրի քաղաքի Շիշյանի անվան «Օկտետ» թիվ 6 երաժշտական դպրոցի նոր շենքը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 447,920 ԱՄՆ դոլարրին համարժեք ՀՀ դրամ, որից<br><br>Շինարարական աշխատանքներ $439,137<br>Տեխնիկական վերահսկողություն $6,587<br>Հեղինակային վերահսկողության $2,196<br><br>Իրականացվելիք շինարարական աշխատանքների մանրամասն ծավալները և արժեքները տրված են պայմանագրին կից հավելվածում: |

2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 439137 (չորս հարյուր երեսունինը հազար մեկ հարյուր երեսունյոթ) ԱՄՆ դոլարրին համարժեք ՀՀ դրամի չափով՝ պայմանագիր կնքված 31.07.2012թ «Կանակա» ԲԲԸ -ի (ՀՀ, ք. Վանաձոր, Նժդեհի 4, ՀՎՀՀ 06901369) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 6587 (վեց հազար հինգ հարյուր ութսունյոթ) ԱՄՆ դոլարրին համարժեք ՀՀ դրամի չափով՝ պայմանագիր կնքված 31.07.2012թ «Տեխպրոյեկտ» ՍՊԸ -ի (ՀՀ, ք. Վանաձոր, Մյասնիկյան 3, ՀՎՀՀ 06909421) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 2196 (երկու հազար մեկ հարյուր իննսունվեց) ԱՄՆ դոլարրին համարժեք ՀՀ դրամի չափով՝ պայմանագիր կնքված 31.07.2012թ «Երանգ» ՍՊԸ -ի (ՀՀ, ք. Գյումրի, Վազգեն Սարգսյան 22, ՀՎՀՀ 05507067) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Շիրակի մարզպետարան, ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 635 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 31-ի N 3/3.8-1/10045-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 1-ի N 02/4643-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հուլիսի 30-ի N ԴԴ/22/7489-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 30-ի N 3-6/8086-12 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 7-ի N 01/08/1/8213-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Միջազգային բժշկական ծառայությունների հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 224000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Միջազգային բժշկական ծառայությունների բարեգործական կազմակերպության կողմից Միջազգային բժշկական ծառայություններ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բժշկական սարքավորումներն ու նյութերը (6 տեղ, 1113 կգ ընդհանուր քաշով, 139692 կանադական դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 3420 եվրո) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Միջազգային բժշկական ծառայությունների հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Միջազգային բժշկական ծառայութ.յունների հայաստանյան մասնաճյուղի կազմակերպության
Անթոնի Ջիմմա Էլյազյանի կողմից
«07.»Օգոստոսի 2012թ.

(Միջազգային Բժշկական Ծառայությունների հայաստանյան մասնաճյուղ)
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | *Ստեղծել միջազգային չափորոշիչներին համապատասխան ժամանակակից բժշկական տեխնիկայով հագեցած կենտրոն<br>*բժշկական ծառայություններ մատուցել Սյունիքի մարզի և Արցախի սոցիալապես անապահով բնակչությանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագիրը բարեգործական որակելու դեպքում օրենքով սահմանված կարգով կարող ենք օգտվել Հայաստանի հանրապետության հարկերի , տուրքերի , պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից, մասնավորապես բժշկական սարքավորումների և բժշկական նյութերի ներմուծման ժամանակ ազատվել մաքսային հարկերից և տուրքերից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Medical Ministry International կազմակերպությունը,որը Միջազգային Բժշկակական Ծառայությունների հայաստանյան մասնաճյուղի հիմնադիրն է:<br>Հասցեն-USA OFFICE<br>400 N ALLEN DRIVE # 204,<br>ALLEN, TX 75013<br>Telephone;(972)727-5864<br>Fax;(972)727-7810<br>e-mail;mmitx@mmint.org |
| 4. | Ծրագիրը կատարողը | Միջազգային Բժշկական Ծռայությունների հայաստանյան մասնաճյուղ:<br>Հասցեն -Սյունիքի Մարզ, քաղաք Կապան Շինարարների 5-7:<br>Գործնեության հասցեն -Սյունիքի Մարզ, քաղաք Կապան,<br>Հ.Ավետիսյան 3ա |



| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծառայությունների մատուցման վայրը Սյունիքի մարզ, ք. Կապան, բնագավառը -առողջապահական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ֆինանսավորումը կիրականացնի Ամերիկյան Medical Ministry International /MMI/ կազմակերպության կողմից: Ծրագրի բյուջեն կազմում է 224000$ /երկու հարյուր քսանչորս հազար ԱՄՆ դոլար/:Դա կարտահայտվի ինչպես գումարային,այնպես էլ սարքավորումների և բժշկական անհրաժեշտ պարագաների մատակարարման միջոցով: |
| 7. | Բարեգործություն ստացողը | *Ծրագիրը նախատեսված է Սյունիքի մարզի և Արցախի կարիքավոր և սոցիալապես անապահով բնակչության համար: Կարիքավոր և սոցիալապես անապահով հիվանդների ընտրությունը իրականացնում ենք Սյունիքի Մարզի և Արցախի սոցիալական ապահովության տարածքային կենտրոնների,համայնքների մարզպետարանի առողջապահության վարչության հետ համագործակցելով:<br>*Հիվանդների ընտրությունը իրականացնում ենք նաև կենտրոն այցելած հիվանդների սոցիոլոգիական հարցումների միջոցով<br>*բժշկական ծառայություններ կմատուցվեն ինչպես Սյունիքի Մարզի կարիքավոր և սոցիալապես անապահով բնակչությանը, այնպես էլ Արցախի բնակչությանը հաշվի առնելով տարածքային առանձնահատկությունները:<br>Նշված տարածաշրջանների հիվանդների համար ավելի նպատակահարմար է ծառայություն ստանալ Կապանում քան Երևանում: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը-հուլիս 2012թ, ավարտը –հուլիս 2015 :<br>Հաջող իրականացման դեպքում ծրագիրը կշարունակի իր առաքելությունն ընդլայնելով իր գործունեությունը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | *Կենտրոնի վերազինում բժշկական ժամանակակից տեխնիկայով 2012-2015 թ –ի ընթացքում 200000$արժողությամբ<br>*Տարեկան մեկ անգամ արտասահմանյան բժիշկների խմբերի այցելություններ որոնք կենտրոնի բժիշկներին կցուցաբերեն |

| | | |
|---|---|---|
| | | անհրաժեշտ գործնական և տեսական օգնություն/այդ ընթացքում կամավորականների հետ միասին ժամանակավոր աշխատանքի հնարավորություն կունենան տեղաբնակներից մի շարք բնակիչներ,տրանսպորտային ծառայություն,սննդի կազմակերպում և այլն/:<br>*Կապանցի 2 նորավարտ բժիշկներ ակնաբուժություն են սովորում MMI կազմակերպության ուսուցման կենտրոնում ,որը գտնվում է Դոմինիկյան Հանրապետությունում,կազմակերպության ծախսերով |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | *աչքի հիվանդությունների դիագնոստիկայի համար անհրաժեշտ սարքավորումներ/տեսողության ,տեսադաշտի, ցանցաթաղանթի և այլն.<br>*կատարակտայի վիրահատության համար արհեստական ոսպնյակի չափերի որոշման սարքեր, ինչպես նաև վիրահատության ժամանակ օգտագործվող նյութեր<br>*աչքի ցանցաթաղանթի վիրահատության ,լազերային միջամտության համար անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր նախատեսվում է կոմունալ ծախսեր,էլեկտրաէներգիա,ջուր,աղբահանություն,հեռախոս,ինտեր-նետ,գործուղում, տրանսպորտ,տնտեսական, գրենական պիտույքներ $24000/քսանչորս հազար դոլար/ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Պատրաստակամորեն կհամագործակցենք ցանկացած կազմակերպության հետ,անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն կներկայացնենք պետական կառավարման մարմիններին: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրակացման համար պատասխանատու է Միջազգային Բժշկական Ծառայությունների հայաստանյան մասնաճյուղը,որը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել<br>*MMI կենտրոնական գրասենյակ ստացված և ծախսված ողջ դրամական միջոցների և ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ:<br>*ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման |



| | | |
|---|---|---|
| | | հանձնաժողովին<br>*MMIգլխավոր տնօրենին պարբերաբար ներկայացնել առաջացած պրոբլեմների և ծրագրի իրականացման հարցում ծագած խնդիրների վերաբերյալ |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 636 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱ-ՐՈՒՄ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԵՎ ՏԱՇԻՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ 20 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N 3/3.8-1/11126-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N 01/5250-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N ՖԲ/ԱնՄ-5/5935-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 23-ի N ՎՄ/3-4/8920-12 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի N 101/104.3.2/4601-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2383331 դրամ ընդհանուր արժողությամբ «Կենցաղային սարքավորումների մատակարարում Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի 20 համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին ու մանկապարտեզներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լոջիք ինտեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00086936) 2012 թվականի հուլիսի 27-ին կնքված՝ N WVA/TAL STEP/SDA-12/001 (RB)-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի տեխնիկական մասնագրերում (հավելված N 1) նշված ապրանքատեսակների մատակարարումը՝ 2383331 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Տնօրենի ժ/պ ________ Մարինե Մաթևոսյան
__ օգոստոսի, 2012թ.

«Կենցաղային սարքավորումների մատակարարում Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի 20 համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին և մանկապարտեզներին»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի 20 համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին և մանկապարտեզներին ջեռոցների և գազօջախների տրամադրմամբ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4. | Ծրագիրը կատարողը | Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը<br>Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝ +37410749146 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի 20 համայնքներ՝ Միխայլովկա, Պրիվոլնոյե, Սարչապետ, Նորաշեն, Լենինավան, Սվերդլով, Ուռուտ, Ագարակ, Լոռի-Բերդ, Ամրակից, Կողես, Ցաղդան, Վարդաբլուր, Գարգառ, Գյուլագարակ, Կուրթան, Պուշկինո, Հոբարձի, Լեջան, Բլագոդարնոյե<br><br>Բնագավառը՝ Սոցիալական |



| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 2 383 331 (երկու միլիոն երեք հարյուր ութսուներեք հազար երեքհարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակի «Տաք Ձմեռ» նախագծի շրջանակում: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2012թ.-ի սեպտեմբերի 30-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ստեփանավանի, Տաշիրի տարածաշրջանի 20 համայնքների բնակիչներ, և Կուրթան, Հոբարձի, Վարդաբլուր, Լեջան, Ամրակից համայնքների մանկապարտեզները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ.-ի հուլիսի 31-ից սեպտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է ջեռոցների և գազօջախների տրամադրում նշված համայնքներ մինչև 2012թ.-ի սեպտեմբերի 10-ը: Կենցաղային իրերի ընդհանուր արժեքը կազմում ՝ 2 383 331 (երկու միլիոն երեք հարյուր ութսուներեք հազար երեքհարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Լոջիկ Ինտեր» ՍՊԸ-ի հետ (պայմանագրի և հավելվածների պատճենները կցվում են): Մատակարարվող ջեռոցների և գազօջախների ընդհանուր արժեքը կազմում է՝ 2 383 331 (երկու միլիոն երեք հարյուր ութսուներեք հազար երեքհարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է նշված բոլոր համայնքների համայնքապետարանների և մանկապարտեզների տնօրենների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը վերահսկվում է ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակի, նաև «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համայնքային կազմակերպիչների կողմից: «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից: |

| | | |
|---|---|---|
| | | Ծրագրի իրականացման ավարտին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ար[illegible] մ[illegible] զարգացման ղեկավար

[illegible] Սարգսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 637 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 17-ի N 3/3.8-1/10759-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 16-ի N 02/5009-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 15-ի N ՎՄ/3-4/8635-12 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 17-ի N 01/15/3380-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 16171717 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի կիրակնօրյա դպրոցի վերանորոգում/» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԲՆՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07613114) 2012 թվականի հուլիսի 20-ին կնքված՝ N WVA/VAR ADP/CW-12/004 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կիրակնօրյան դպրոցի վերանորոգում՝ 16171717 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական

կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի

տնօրենի պաշտոնակատար Լիանա Պողոսյանի կողմից

« 10 » -օգոստոսի--, 2012թ.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի կիրակնօրյա դպրոցի վերանորոգում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել բարելավելու ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքում գտնվող Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի կիրակնօրյա դպրոցի շենքային պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Ֆրանսիայի աջակցող գրասենյակ,<br>հասցե՝ Վիժն Դու Մոնդ, 7 ռուե Փասքուիր, 75008, Փարիզ, Ֆրանսիա,<br>հեռախոս՝ +01 49 49 11 12 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1 ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք:<br>Բնագավառը՝ կրթություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 16171717 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող է հանդիսանում Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 օգոստոսի 2012թ. – 30 հոկտեմբերի 2012թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Միջոցառումների նկարագրությունը | ժամկետները | անհրաժեշտ ֆինանս. միջոցներ |
|---|---|---|
| | | |
| Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքում գտնվող Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի կիրակնօրյա դպրոցի վերանորոգման աշխատանքների իրականացում | օգոստոս-հոկտեմբեր 2012թ. | **16171717** դրամ |

2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքում գտնվող Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի կիրակնօրյա դպրոցի վերանորոգման աշխատանքերն իրականացվելու է բաց մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ԲՆՎ ՍՊԸ շինարարական կազմակերպության կողմից:<br>Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքում գտնվող Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի կիրակնօրյա դպրոցի վերանորոգման համար նախատեսված է **16171717** դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի և Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի հետ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Հուսիկ Սարգսյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»

միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի

Գեղարքունիքի զարգացման ծրագրի ղեկավար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 638 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՎԱԶԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԱՌՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՌԵՑՆՈՂ ՀԱՐՄԱՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 6-ի N 3/3.8-1/10264-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 7-ի N 02/4795-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 6-ի N ՎՄ/3-4/8321-12 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 7-ի N 01/15/3209-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2500000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ավազան համայնքի մրգի պահպանման սառնարանի համար սառեցնող հարմարանքի մատակարարում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Կարինե Հարությունյանի կողմից

«25» 07, 2012թ.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ավազան համայնքի մրգի պահպանման սառնարանի համար սառեցնող հարմարանքի մատակարարում և տեղադրում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել Գեղարքունիքի մարզի «Գարդման» գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվին ստեղծելու պայմաններ Գեղարքունիքի մարզի Ավազան համայնքի գյուղացիական տնտեսություն վարողների կողմից արտադրվող մրգի և բանջարեղենի երկարատև պահպանման համար, զարգացնելու համայնքներում գյուղատնտեսական արտադրանքի իրացման և եկամտաբերության հնարավորությունները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Ֆրանսիայի աջակցող գրասենյակ,<br>հասցե՝ Վիժն Դու Մոնդ, 7 ռուե Փասքուիր, 75008, Փարիզ, Ֆրանսիա,<br>հեռախոս՝ +01 49 49 11 12 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>հասցե՝ ք. Երևան, Ռ.Մելիքյան 1 ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Ավազան համայնք:<br>Բնագավառը՝ գյուղատնտեսություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **2.500.000** դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող է հանդիսանում Գեղարքունիքի մարզի «Գարդման» գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 օգոստոսի 2012թ. – 15 հոկտեմբերի 2012թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | (see table below) |

| Միջոցառումների նկարագրությունը | Ժամկետները | անհրաժեշտ ֆինանս. միջոցներ |
|---|---|---|
| Գեղարքունիքի մարզի Ավազան համայնքի մրգի պահպանման սառնարանի համար սառեցնող հարմարանքի մատակարարում և տեղադրում | Օգոստոս-հոկտեմբեր, 2012թ. | **2.500.000** դրամ |

2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Գեղարքունիքի մարզի Ավազան համայնքի մրգի պահպանման սառնարանի համար սառեցնող հարմարանքի մատակարարումը և տեղադրումը իրականացվելու է բաց մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից: Գեղարքունիքի մարզի Ավազան համայնքի մրգի պահպանման սառնարանի համար սառեցնող հարմարանքի մատակարարման և տեղադրման արժեքը **2.500.000** դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան հասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գեղարքունիքի մարզի Ավազան համայնքի և «Գարդման» գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվի հետ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Հուսիկ Սարգսյան
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Գեղարքունիքի զարգացման ծրագրի ղեկավար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 639 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՌՈՂՋ ԵՐԵԽԱ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-1/9966-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հուլիսի 31-ի N 02/4636-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 30-ի N ԱԱ/3-4/8058-12 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հուլիսի 27-ի N 01/3524-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 12000000 դրամ ընդհանուր արժողությամբ «Առողջ երեխա» ծրագիրը (կցվում է):

2. Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյուն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական
կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն՝ Գրահամ Սթրոնգի կողմից
«...19....» ......հուլիսի.............. 2012թ

«Առողջ երեխա»

# ԾՐԱԳԻՐ

<table>
<tr><td>1</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Խթանել առողջ ապրելակերպի և անձնական հիգիենայի կանոնների ձևավորմանը, «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի Գյումրիի Տարածքային Զարգացման Ծրագրի "Երեխաների Հովանավորչության" ծրագրում գրանցված, Գյումրի քաղաքի Անի, Մուշ-2, Ծերամ, Ավստրիական թաղամասերի, Մարմաշեն և Հովունի գյուղերի թվով 3800 երեխաների մոտ</td></tr>
<tr><td>2</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</td></tr>
<tr><td>3</td><td>Բարեգործը</td><td>Վորլդ Վիժն ԱՄՆ գրասենյակ, հասցե՝ 34834 Վեերհուզեր Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռախոս՝: 1-888-511-6548</td></tr>
<tr><td>4</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>Ծրագիրն անմիջականորեն կատարողն է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռոմանոս Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755):</td></tr>
<tr><td>5</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Իրականացման վայրը՝ Շիրակի մարզ, Գյումրի քաղաքի Անի, Մուշ-2, Ծերամ, Ավստրիական թաղամասերի, Մարմաշեն և Հովունի գյուղեր<br>Բնագավառը՝ առողջապահական:</td></tr>
<tr><td>6</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 12 000 000 դրամ:</td></tr>
<tr><td>7</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի Գյումրիի Տարածքային Զարգացման Ծրագրի "Երեխաների Աջակցության" ծրագրում գրանցված Գյումրի քաղաքի Անի, Մուշ-2, Ծերամ, Ավստրիական թաղամասերի, Մարմաշեն և Հովունի գյուղերի սոցիալապես անապահով ընտանիքների 1996-2010թթ ծնված 3800 երեխաները:</td></tr>
<tr><td>8</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>01 հուլիս 2012- 25 սեպտեմբեր 2012</td></tr>
<tr><td>9</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td><table>
<tr><td>Միջոցառումների նկարագրությունը</td><td>ժամկետները</td><td>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</td></tr>
<tr><td>Բաց մրցույթի կազմակերպում և հիգիենիկ փաթեթների պարագաների մատակարարումն իրականացնող կազմակերպության ընտրություն</td><td>20 հուլիս 2012թ.-<br>05 օգոստոս 2012թ.</td><td>չի պահանջվում</td></tr>
<tr><td>Մատակարարումն իրականացնող կազմակերպության հետ պայմանագրերի կնքում և նյութերի գնում</td><td>05 օգոստոս 2012թ.-<br>10 օգոստոս 2012թ.</td><td>12 000 000</td></tr>
<tr><td>Հիգիենիկ փաթեթների բաժանում 3800 երեխաներին</td><td>11 օգոստոս 2012թ.-<br>25 օգոստոս 2012թ</td><td>չի պահանջվում</td></tr>
</table></td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Ծրագրի շրջանակներում մրցույթով ընտրված կազմակերպության հետ կկնքվի համապատասխան պայմանագիր հիգիենիկ փաթեթների (3800 երեխայի համար) պարագաների մատակարարման համար: Յուրաքանչյուր երեխային տրամադրվող հիգիենիկ փաթեթը կպարունակի ատամի մածուկ, ատամի խոզանակ, սովորական և հակաբակտերիալ օճառ, շամպուն, սրբիչ, ականջի փայտիկներ, չոր և խոնավ անձեռոցիկներ:<br>Գործարքի մոտավոր արժեքը կկազմի 12 000 000 դրամ, որի համար ակնկալվում է գործարքի շրջանակներում ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում:</td></tr>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ</td><td>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի մարզպետարանի հետ համագործակցությամբ:</td></tr>
<tr><td>13</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Ծրագրերի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կենտրոնական գրասենյակի և վերջինիս Գյումրիի Տարածքային Զարգացման Ծրագրի գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:</td></tr>
</table>

Գրահամ Սթրոնգ...../........./2012

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 640 -Ա**
**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-1/9965-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հուլիսի 31-ի N 02/4637-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 27-ի N ՎՄ/3-4/8044-12 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2012 թվականի հուլիսի 31-ի N 01/14.2/2424-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1732983 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ներքին Բազմաբերդ համայնքին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2012 թվականի հուլիսի 9-ին կնքված՝ N WVA/TAL ADP/CM-12/001(RB) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 1732983 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 6-ի N 3/3.8-2/10262-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 6-ի N ԴԴ/22/7740-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության հարցերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 6-ի N 04/07-1/8558-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 8-ի N ՋԲ/ԱնՄ-5/5532-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 6-ի N ՎՄ/3-6/8370-12 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2012 թվականի օգոստոսի 8-ի N 01/12.1/2512-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Նիդեռլանդներից «Global Aid Network» բարեգործական կազմակերպության կողմից աջակցության նպատակով Ուջանի «Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի (559 տեղ, 8190 կգ ընդհանուր քաշով, 3000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3180 եվրո, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Ուջանի «Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հոլանդիայից Ուջանի միջնակարգ դպրոցին ուղարկված բեռի բաշխման

Ցանկ

| N | Բեռի անվանումը | Չափման միավոր | Ստացող |
|---|---|---|---|
| 1. | Դպրոցական գրասեղան (օգտագործված) | 237 հատ | Ուջանի զոր.Անդրանիկի անվ. միջն. դպրոց |
| 2. | Դպրոցական աթոռ (օգտագործված) | 246 հատ | Ուջանի զոր.Անդրանիկի անվ. միջն. դպրոց |
| 3. | Միկրոալիքային վառարան (օգտագործված) | 2 հատ | Ուջանի զոր.Անդրանիկի անվ. միջն. դպրոց |
| 4. | Գազօջախ (օգտագործված) | 2 հատ | Ուջանի զոր.Անդրանիկի անվ. միջն. դպրոց |
| 5. | Սառցարան (օգտագործված) | 1 հատ | Ուջանի զոր.Անդրանիկի անվ. միջն. դպրոց |
| 6. | Գրատախտակ (օգտագործված) | 7 հատ | Ուջանի զոր.Անդրանիկի անվ. միջն. դպրոց |
| 7. | Հագուստ և դպրոցական համազգեստ ( օգտագործված) | 900 կգ | Ուջանի զոր.Անդրանիկի անվ. միջն. դպրոցի աշակերտներին |
| 8. | Անվասայլակ հաշմանդամային (օգտագործված) | 7 | Ուջանի ամբուլատորիային |
| | | 6 | Աշտարակի բժշկական կենտրոն ՓԲԸ |
| | | 8 | Աշտրակի մարզպետարանի սոց. բաժնին |

Դպրոցի տնօրեն /Ռ. Հարությունյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 652 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 1-ի N 3/3.8-2/10051-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հուլիսի 30-ի N ԴԴ/22/7476-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 31-ի N ԱԱ/3-6/8149-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի «ՍԵՄՌԱ Պլուս» հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված համակարգչային տեխնիկան ու պատին ամրացվող ախտորոշիչ լուծույթի բաշխիչը (1 տեղ, 275 կգ ընդհանուր քաշով, 2842.50 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 276132 դրամ, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 653 -Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-896-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-2/11343-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 16-ի N ՎՄ/3-6/8664 -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայից Սրբազան Գրիգոր Ղաբրոյանի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (53 տեղ, 1684 կգ ընդհանուր քաշով, 7660.33 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 1157.88 եվրո, բեռի ցանկը կցվում է, Շիրակի ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն անապահով ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-896-Ա որոշմամբ (2011 թվականի հունվարի 21-ի N Մ-007-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Լ

ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՍՏԱՑՎԵԼԻՔ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

11/26.24

(Container No MSCU 119363-6)

| Հ/Հ | Ստացող կազմա-կերպություն | Քանակ (արկղ, կգ, հատ, զույգ) | Արկղի պարունակություն | Ապրանքի անվանում | Միավորի արժեք € | Ընդհանուր արժեք € |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տիրամայր Հայաստանի կենտրոն | 28 | 3 կտոր (60 հատ) | սեղան | 31 | 1860 |
| | | | 2 կտոր (60 հատ) | աթոռ | 18.14 | 1088.5 |
| | | | 2 կտոր (48 հատ) | ժողովի աթոռ | 21.46 | 1030.3 |
| | | | 3 կտոր (3 հատ) | մուտքի հանդերձապահարան | 77.33 | 232 |
| | | | 12 կտոր (12 հատ) | ժողովի հանդերձապահարան | 99.92 | 1199 |
| | | | 1 կտոր (10 հատ) | աթոռների ամրակային մասեր | 4.3 | 43 |
| | | | 1 կտոր (2 հատ) | բանալիների պահարան | 134.65 | 269.3 |
| | | | 1 կտոր (2 հատ) | անվանաթուղթ ինքնասոսնձվող | 6.5 | 13 |
| | | | 3 կտոր (3 հատ) | գրասենյակի պահարան | 95.08 | 285.23 |
| 2 | Տիրամայր Հայաստանի ճամբար | 25 | 24 կտոր (24 հատ) | սպասասենյակի հանդերձապահարան | 52.04 | 1249 |
| | | | 1 կտոր (2 հատ) | ցուցադրության պահարան | 195.5 | 391 |

Այս բեռի ընդհանուր քաշն է 1684.00 (հազար վեց հարյուր ութանասունչորս) կգ, արժեքը՝ € 7660.33(յոթ հազար վեց հարյուր վաթսուն ամբողջ, երեսուներեք հարյուրերրորդական Եվրո), ճանապարհածախսը կազմում է € 1157.88 (մեկ հազար հարյուր հիսունյոթ ամբողջ, ութանասունութ հարյուրերրորդական Եվրո):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 654 -Ա**
**քաղ. Երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-1/9775-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 27-ի N 3/3-4/8046-12 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԿԱՆԱԿԱ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2012 թվականի հուլիսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արմավիրի մարզի Լեռնագոգի համայնքի դպրոցի տարածքի ընդլայնում՝ 4705000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 655 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-168-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 3/3.8-1/9757-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 30-ի N ՎՄ/3-4/8057-12 եզրակացությունները,* ***ո ր ո - շ ու մ է .***

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրգանական բանջարեղենի մշակության փորձացուցադրական ուսումնական կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-168-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գարիկ Մնացականյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 43053135) 2012 թվականի հուլիսի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրանոցի և ծխարանի կառուցում՝ 800000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գարիկ Մնացականյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 43053135) 2012 թվականի հուլիսի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ոռոգման ցանցի կառուցում՝ 2025000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 656 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 18-ի N 3/3.8-1/10809-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 20-ի N ՎՄ/3-4/8781-12 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. ԷՅ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վալենսիա» ՀՁ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835704) 2012 թվականի օգոստոսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աթոռների և սեղանի ձեռքբերում՝ 225000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 657 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-403-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-1/9970-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 31-ի N ԱՄ/3-4/8108-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Ամառային ճամբար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի և Մարմաշեն ու Հովունի գյուղերի 600 երեխաների համար» ծրագրի մասին» N Մ-403-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմավ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05511726) 2012 թվականի հուլիսի 20-ին կնքված՝ N WVA/GYUM ADP/03/FY 02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամառային ճամբարի կազմակերպում՝ 29046000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 658 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N Մ-052-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 3/3.8-1/ 11170-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 14-ի N ՎՄ/3-4/8575 -12 եզրակացությունները,* ***ո ր ո - շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Առողջ սնունդ» N Մ-052-Ա (2012 թվականի մարտի 14-ի N Մ-161-Ա որոշման խմբագրությամբ )որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում «15857090 դրամ» բառերը փոխարինել «17250000 դրամ» բառերով.

2) որոշմամբհաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Խաչարամ կոնսերվատորիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01000825) 2012 թվականի հունիսի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ուսուցողական նյութերի տպագրում՝ 8200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ասողիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2012 թվականի հունիսի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ուսուցողական նյութերի տպագրում՝ 2280000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեշնլ» Հայաստանյան

ներկայացուցչության տնօրեն՝ Ի. Սարգսյանի կողմից

............................................

20-ը օգոստոսի 2012 թ

«ԱՌՈՂՋ ՍՆՈՒՆԴ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Խթանել առողջ սննդի օգտագործումը տարրական դպրոցի երեխաների շրջանում |
| 2 | Ծրագրի բարեգործական ոլակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Միավորված ազգերի կազմակերպության պարենի համաշխարհային ծրագիր,<br>ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Երևան 0010, Պետրոս Ադամյան 14 |
| 4 | Ծրագրի կատարողը | «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեշնլ»/ ՍՉ կազմակերպության հայաստանյան ներկայացուցչություն<br>Ք. Երևան, Ազաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ 02251537 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ, Երևան և Արմավիր<br>Բնագավառը՝ առողջապահական: |
| 6 | Ծրագրի բյուջեն («ՄԱԿ-ի »-ի պարենի համաշխարհային ծրագրի մասով) | 17,250,000 դրամ (կամ 42,857 ԱՄՆ դոլար՝ հաշված 402,5 փոխարժեքով) |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ հանրակրթական տարրական դպրոցի աշակերտները/ 1-4 դասարաններ: |



| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2012 թվականի սեպտեմբերի 30-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի հիմնական նպատակին հասնելու համար նախատեսվում է.<br>• Մշակել առողջ սննդի վերաբերյալ կրթական նյութ, ներառյալ " Առողջ սնունդ" ուսուցչի ձեռնարկը և " Առողջ սնունդ" ուսուցողական նյութերը տարրական դասարանների աշակերտների համար,<br>• իրականացնել մշակված նյութի փորձարկման համար ընտրված դպրոցների ուսուցիչների վերապատրաստում,<br>• ընտրված դպրոցներում իրականացնել մշակված նյութի փորձարկումը,<br>• ներկայացնել մշակված նյութը ՀՀ Կրթության և գիտության և առողջապահության նախարարություններ՝ վերանայման և հաստատման,<br>• տպագրել մշակված և հաստատված ձեռնարկները:<br><br>Ընդամենը ըստ եռամսյակների պլանավորվում է իրականացնել հետևյալ ծախսերը. |

| Եռամ-սյակ | Ծրագրային աշխատակազմի աշխատավարձ (հազ. դրամ) | Կրթական նյութերի մշակման ծառայությունների մատուցում (հազ. դրամ) | Վերապատ.Դաս-ընթացների կազ-մակերպում և պիլոտաժ (հազ. դրամ) | Տպագրական ծառայությունների մատուցում (հազ. դրամ) | Գործուղման ծախսեր (հազ. դրամ) | Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| IV - 2011 | 252.86 | | | | 22.86 | 275.72 |
| I – 2012 | 758.57 | 2,020.00 | 50.00 | | 68.57 | 2,897.14 |
| II – 2012 | 758.57 | | | 11,300.00 | 68.57 | 12,127.14 |
| Ընդամենը | 1,770.00 | 2,020.00 | 50.00 | 11,300.00 | 160.00 | 15,300.00 |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և | • Ծրագրում ընդգրկված ՍՉ-ի աշխատակազմի աշխատավարձը - 1,770,000 դր.<br>• Կրթական նյութերի մշակման ծառայությունների մատուցում – 2,020,000 դր.<br>• Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում - 50,000 դր. |



11/27.22

11/27.22

| | | |
|---|---|---|
| | Նախատեսվող գինը | • Տպագրական ծառայությունների մատուցում – 11,300,000 դր.<br>• Գործուղման և տրանսպորըային ծախսեր (գործուղումներ վերապատրաստման նպատակով, փոխադրման ծառայությունների մատուցում ) - 160,000 դր. |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | • Սպասարկող աշխատակազմի աշխատավարձը - 1,300,000 դր.<br>• Օպերացիոն ծախսեր - 650,000 դր., ներառում է գրասենյակի վարձը, գրենական պիտույքներ, սարքավորումների սպասարկման ծախսեր, բանկային ծախսեր: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում ՍՉ-ն կհամագործակցի ՀՀ Կրթության և գիտության և ՀՀ առողջապահության նախարարությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» կազմակերպության, նշված նախարարությունների և ընտրված դպրոցների կողմից և ընդգրկում է հետևյալ գործողությունները.<br>• Ֆինանսական մոնիթորիգ;<br>• Ադմինիստրատիվ վերահսկողություն;<br>• Սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

11/27.22

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 659 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՋԱՏԻԿԱՎԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 29-ի N 3/3.8-1/11218-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի -ի N02/ -12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N ՖԲ/ԱնՄ-2/5996-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 26-ի N ՎՄ/3-4/9030-12 ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի օգոստոսի -ի N 01/14/ -12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1600000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի գյուղի տարածքում «Ջատիկավան» ծրագրի շրջանակներում անասնագոմի վերակառուցման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2012 թվականի օգոստոսի 16-ին կնքված՝ N ՀՀ/ՆՆ-02/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի գյուղի տարածքում «Բարեշավիղ միաբանություն» ԲՀԿ-ին պատկանող հողատարածքում «Ջատիկավան» ծրագրի շրջանակներում անասնագոմի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ՝ 1500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«23» օգոստոսի 2012թ.

# «ՀՀ Կոտայքի մարզի Արզնի գյուղի տարածքում «Զատիկավան» ծրագրի շրջանակներում անասնագոմի վերակառուցման նախագծում»
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել «Զատիկ» մանկատան նորաստեղծ ընտանիքների երիտասարդներին աշխատանքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Կոտայքի մարզ, Արզնի գյուղ, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.600.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | «Զատիկ» մանկատան շրջանավարտ երիտասարդների ընտանիքները |



| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ օգոստոսի 16 -ից մինչեւ 2012թ. նոյեմբերի 16-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՀԳԾՆ» ՍՊԸ-ի կողմից անասնագոմի վերակառուցման նախագծում՝ 1.500.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>Նախատեսվում է նաև նախագծի փորձաքննություն 100.000,00 դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Կոտայքի մարզպետարանի հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 660 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՃՈՃԿԱՆ ԵՎ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԵՐԻ ՈՒ ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 3/3.8-1/11172-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 21-ի N 01/5139-12, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2012 թվականի օգոստոսի 22-ի N 07/16/4385-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 20-ի N ՎՄ/3-4/8784-12 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի N 101/104.3.2/4525-12 եզրակացություն-ները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 15287108 դրամ ընդհանուր արժողությամբ «Լոռու մարզի Ճոճկան և Այրում համայնքների ոռոգման ջրագծերի ու Կաճաճկուտ համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239826) 2012 թվականի հուլիսի 20-ին կնքված՝ N WVA/ALAV ADP/CM-12/004 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 13731680 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239826) 2012 թվականի օգոստոսի 10-ին կնքված՝ N WVA/Order#3/FY12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պոլիէթիլենային խողովակների և հարակից մասերի մատակարարում՝ 1555428 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյուն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի

Տնօրեն՝ Էլիանա Պողոսյան

16-ը օգոստոսի, 2012թ.

«Լոռու մարզի Ճոճկան և Այրում համայնքների ոռոգման ջրագծերի և Կաճաճկուտ համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Լոռու մարզի Այրում և Ճոճկան համայնքների ներքին ենթակառուցվածքների ոռոգման ջրագծերի վերանորոգման նպատակով, ինչպես նաև Կաճաճկուտ համայնքի բնակչության սոցիալական պայմանների բարելավման նպատակով համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգման համար տրամադրել շինարարական նյութեր |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Ազատել ՀՀ-ի մաքսերի, տուրքերի, պարտադիր վճարների զծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ<br>*Հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MSKI5, OZR, United Kingdom* |
| 4. | Ծրագիրը կատարողը | Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լոռու մարզի Այրում, Ճոճկան և Կաճաճկուտ համայնքներ:<br><br>*Բնագավառը՝ ջրամատակարարում* |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 15 287 108 (տասնհինգ միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար հարյուր և ութ) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ: Ֆինանսավորումը ստացվել է 2011թ.-ի հոկտեմբեր ամսին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2012թ.-ի սեպտեմբերի 7-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լոռու մարզի Այրումի, Ճոճկանի և Կաճաճկուտի համայնքապետարաններ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ.Օգոստոսի 10-ից սեպտեմբերի 7-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Այրում, Ճոճկան և Կաճաճկուտ համայնքներ մինչև 2012թ.-ի սեպտեմբերի 7-ը: Շինարարական նյութերի ընդհանուր արժեքը կազմում է՝ 15 287 108 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Վեստ Պլաստ» ՍՊԸ-ի հետ Այրում և Ճոճկան համայնքների ոռոգման ջրագծի վերանորոգման նպատակով շինարարական նյութերի մատակարարման համար, որի արժեքը կազմում է 13731680 դրամ, ինչպես նաև պայմանագիր է կնքվել «Նայիրի» ՍՊԸ հետ կաճաճկուտ համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգման նպատակով շինարարական նյութերի մատակարարման համար, որի արժեքը կազմում է 1555428 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Այրումի, Ճոճկանի և Կաճաճկուտի համայնքապետարանների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը վերահսկվում է ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի կողմից ինչպես նաև «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համայնքային կազմակերպիչների կողմից: «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից: |

| | | |
|---|---|---|
| | | Հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Վարազդատ Սարգսյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ալավերդու տարածքային զարգացման ծրագրի ղեկավար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 661 -Ա**
**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՀՈՎԻՏ ԵՎ ՈՍԿԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-1/11305-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 02/5389-12, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 07/16/4567-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 28-ի N ՎՄ/3-4/9026 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2012 թվականի օգոստոսի 28-ի N 21/10.1/3650-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2940634 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ և Ոսկևան համայնքների խմելու ջրի ջրամբարների վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08416387) 2012 թվականի հուլիսի 23-ին կնքված՝ N WVA/TAV ADP/CM-12/005 (RB) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 2940634 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի տնօրենի Գրահամ Սթրոնգի կողմից
«27-ը»Օգոստոս, 2012թ.

«ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ և Ոսկևան համայնքների խմելու ջրի ջրամբարների վերանորոգում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցել Այգեհովիտ համայնքի ընդհանուր 360 խմ խմելու ջրի 2 ջրամբարների և Ոսկևան համայնքի 60 խմ խմելու ջրի ջրամբարի վերանորոգման աշխատանքներին, որը կօգնի համայնքների բնակիչներին, ներկայիս ջրի կորուստ և ոչ սանիտարահիգենիկ պայմաններում գտնվող ջրամբարի փոխարեն ունենալ անկորուստ և սանիտարահիգենիկ պայմաններում գտնվող ջրամբար, զերծ մնալով ջրի կորստից և անսանիտարահիգենիկ պայմաններից: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի աջակցող գրասենյակի կողմից: Հասցե: 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 1-888-511-6548 www.worldvision.org |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1 ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ, Տավուշի մարզ, Այգեհովիտ և Ոսկևան համայնքներ:<br>Բնագավառը՝ ջրամատակարարում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **2.940.634** դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող է հանդիսանում ՀՀ Տավուշի մարզի Ոսկևան և Այգեհովիտ համայնքները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 23 հուլիս 2012թ. – 30 սեպտեմբեր 2012թ. |

2

<table>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>
<table>
<tr><th>Միջոցառումների նկարագրությունը</th><th>ժամկետներ ը</th><th>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</th></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Բաց մրցույթի անցկացում՝ ներկայացված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի հիման վրա շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպություն ընտրելու նպատակով</td><td>Հուլիս 2012թ.</td><td>ֆինանսական միջոցներ չեն պահանջվում</td></tr>
<tr><td>Տավուշի մարզի Ոսկևան և Այգեհովիտ համայնքներում ջրամբարների վերանորոգման աշխատանքներ</td><td>Օգոստոս 2012- Սեպտեմբեր 2012թ.</td><td>Այգեհովիտ համայնքի ընդհանուր 360 խմ խմելու ջրի 2 ջրամբարների վերանորոգում 1.180.103 դրամ և Ոսկևան համայնքի 60 խմ խմելու ջրի ջրամբարի վերանորոգում 1.760.531 դրամ</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Տավուշի մարզի Այգեհովիտ և Ոսկևան համայնքների ջրամբարների վերանորոգման համար ձեռք է բերվելու շինարարական նյութեր, որի մատակարարը կլինի <<Դելտա-Ինտեգրալ>> ՍՊԸ-ն: Այգեհովիտ համայնքի ընդհանուր 360 խմ խմելու ջրի 2 ջրամբարների և Ոսկևան համայնքի 60 խմ խմելու ջրի ջրամբարի վերանորոգման աշխատանքներն իրականացվելու է Այգեհովիտ և Ոսկևան համայնքների համայնքապետարանի կողմից: Տավուշի մարզի Այգեհովիտ և Ոսկևան համայնքների ջրի ջրամբարների վերանորոգման համար նախատեսված է 2.940.634 դրամ:</td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան միասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Տավուշի մարզի Այգեհովիտ և Ոսկևան համայնքների համագործակցությամբ:</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</td></tr>
</table>

Ռոբերտ Հակոբյան
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Տավուշի զարգացման ծրագրի ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 662 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԿԻՍԱԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 3/3.8-1/11161-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 01/5315-12, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 07/16/4566-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 27-ի N ՎՄ/3-4/8992-12 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի N 01/15/3538-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3865215 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր և Գեղարքունիք համայնքներին ոռոգման համակարգերի վերանորոգման համար խողովակների և կիսախողովակների տրամադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2012 թվականի օգոստոսի 17-ին կնքված՝ N WVA/GAV ADP/CM-12/002, LOT 1-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 3865215 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության

հայաստանյան մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Նարինե Մաթևոսյանի կողմից

«23» օգոստոսի, 2012թ.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր և Գեղարքունիք համայնքներին ոռոգման համակարգերի վերանորոգման համար խողովակների և կիսախողովակների տրամադրում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր և Գեղարքունիք համայնքներին բարելավելու ոռոգման ենթակառուցվածքները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Թայվան աջակցող գրասենյակ,<br>հասցե՝ Վորլդ Վիժն Թայվան, 6Ֆ, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան,<br>հեռախոս՝: +886-2-2175-1995 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>հասցե՝ ք. Երևան, Ռ.Մելիքյան 1 ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Լանջաղբյուր և Գեղարքունիք համայնքներ:<br>Բնագավառը՝ ջրամատակարարում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3.865.215 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող է հանդիսանում Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր և Գեղարքունիք համայնքները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 17 օգոստոսի 2012թ. – 30 սեպտեմբերի 2012թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | (see table below) |

| Միջոցառումների նկարագրությունը | ժամկետները | անհրաժեշտ ֆինանս. միջոցներ |
|---|---|---|
| Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր և Գեղարքունիք համայնքների ոռոգման համակարգի վերանորոգման աշխատանքների իրականացման | Օգոստոս-Սեպտեմբեր, 2012 | 3.865.215 դրամ |

2

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | համար խողովակների և կիսախողովակների տրամադրում | | |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր և Գեղարունիք համայնքների ոռոգման համակարգերի վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ 270 մետր խողովակների մատակարարումը Գեղարքունիք համայնք և 30 հատ հավաքովի երկաթբետոնե կիսախողովակի LR-40 տիպի (6մ- 0.47մ3) մատակարարումը Լանջաղբյուր համայնք իրականացվելու է բաց մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Արաման Սթոուն Սթայլ » ՍՊԸ կողմից:<br>Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր և Գեղարքունիք համայնքների ոռոգման համակարգերի վերանորոգման նպատակով խողովակների և կիսախողովակների տրամադրման համար նախատեսված է 3.865.215 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան հասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր և Գեղարքունիք համայնքների հետ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին տարեկան հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Հուսիկ Սարգսյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»

միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի

Գեղարքունիքի զարգացման ծրագրի ղեկավար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**օգոստոսի 2012 թվականի N Մ - 663 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ 26 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N 3/3.8-1/11140-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N 01/5275-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N ՖԲ/ԱնՄ-5/5897-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 23-ի N ՎՄ/3-4/8921-12 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2012 թվականի օգոստոսի 22-ի N 01/10.1/2674-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1776685 դրամ ընդհանուր արժողությամբ «Կենցաղային սարքավորումների մատակարարում Թալինի տարածաշրջանի 26 համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին ու մանկապարտեզներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լոջիք ինտեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00086936) 2012 թվականի հուլիսի 27-ին կնքված՝ N WVA/TAL STEP/SDA-12/001 (RB)-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի տեխնիկական մասնագրերում (հավելված N1) նշված ապրանքատեսակների մատակարարումը՝ 1776685 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Տնօրեն [illegible] Նարինե Մաթևոսյան
22 օգոստոսի, 2012թ.

«Կենցաղային սարքավորումների մատակարարում Թալինի տարածաշրջանի 26 համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին և մանկապարտեզներին»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել Թալինի տարածաշրջանի 26 համայնքների 52 սոցիալապես անապահով ընտանիքներին և 6 մանկապարտեզներին ջեռոցների, գազօջախի և սալօջախի տրամադրմամբ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4. | Ծրագիրը կատարողը | Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը<br>Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Թալինի տարածաշրջանի 26 համայնքներ՝ Ազարակ, Կաքավաձոր, Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ, Վերին Սասնաշեն, Ներքին Սասնաշեն, Դավթաշեն, Իրինդ, Կաթնաղբյուր, Աշնակ, Եղնիկ, Թալին, Մաստարա, Զովասար, Գառնահովիտ, Ոսկեթաս, Կարմրաշեն, Ակունք, Հացաշեն, Դաշտադեմ, Ցամաքասար, Սուսեր, Նոր Արթիկ, Զարինջա, Արտենի, Եղնիկ համայնքներ. |

2

| | | |
|---|---|---|
| | | Բնագավառը՝ Սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 1,776,685 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակի «Տաք Ձմեռ» նախագծի շրջանակում: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2012թ.-ի սեպտեմբերի 30-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Թալինի տարածաշրջանի 26 համայնքների բնակիչներ, և Արտենի,Մաստարա,Կաթնաղբյուր,Աշնակ,Դաշտադեմ և Զարինջա համայնքների մանկապարտեզները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ.-ի հուլիսի 31-ից սեպտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է ջեռոցների, գազօջախի և սալօջախի տրամադրում նշված համայնքներ մինչև 2012թ.-ի սեպտեմբերի 10-ը: Կենցաղային իրերի ընդհանուր արժեքը կազմում ՝ 1,776,685 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Լոջիկ Ինտեր» ՍՊԸ-ի հետ (պայմանագրի և հավելվածների պատճենները կցվում են): Մատակարարվող ջեռոցների, գազօջախի և սալօջախի ընդհանուր արժեքը կազմում է՝ 1,776,685 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է նշված բոլոր համայնքների համայնքապետարանների և մանկապարտեզների տնօրենների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը վերահսկվում է ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակի, նաև «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համայնքային կազմակերպիչների կողմից: «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից: |

| | | |
|---|---|---|
| | | Ծրագրի իրականացման ավարտին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտնի մարզի զարգացման ղեկավար

Լուսինե Մարգարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 664 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԴԱՎԹԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑՈՒՄ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N 3/3.8-1/11139-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 01/5314-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի օգոստոսի 24-ի N 03/07.2/9286-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 27-ի N ՎՄ/3-4/8988-12 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2012 թվականի օգոստոսի 27-ի N 01/14.2/2699-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3202883 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դավթաշեն համայնքի դպրոցում ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00847479) 2012 թվականի հուլիսի 18-ին կնքված՝ N WVA/TAL ADP/HT-12/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում՝ 3202883 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական
Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
Տնօրեն [illegible] [illegible]րինե Մաթևոսյան
[illegible]ոստոսի, 2012թ.

«Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Դավթաշեն համայնքի
դպրոցում ջեռուցման համակարգի տեղադրում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դավթաշեն համայնքի դպրոցում տեղադրել ջեռուցման համակարգ այդ համայնքի դպրոցական տարիքի երեխաների ակտիվ ուսումնառությանը նպաստելու համար: |
| .2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4. | Ծրագիրը կատարողը | Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը<br>Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝ +37410749146 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դավթաշեն համայնքի դպրոց:<br>Բնագավառը՝ կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 3,202,883 (երեք միլիոն երկու հարյուր երկու հազար ութ հարյուր ութսուներեք) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Կանադայի աջակցող գրասենյակ: Ֆինանսավորումը ստացվել է 2011թ.-ի հոկտեմբեր ամսին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2012թ.-ի հոկտեմբերի 15-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դավթաշեն համայնքի |



| | | |
|---|---|---|
| | | դպրոցը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ.-ի հուլիսի 18-ից հոկտեմբերի 15-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է ջեռուցման համակարգի մատակարարումն ու տեղադրումն իրականացնել Դավթաշեն համայնք մինչև 2012թ.-ի սեպտեմբերի 1-ը: Ջեռուցման համակարգի ընդհանուր արժեքը կազմում է՝ 3,202,883 (երեք միլիոն երկու հարյուր երկու հազար ութ հարյուր ութսուներեք) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար մրցութային կարգով ընտրվել և պայմանագիր է կնքվել «ԻՄԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ՝ 3,202,883 (երեք միլիոն երկու հարյուր երկու հազար ութ հարյուր ութսուներեք) դրամ ընդհանուր արժողությամբ: Մատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճեն և համապատասխան հավելվածները կցվում են: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունը համագործակցում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դավթաշեն համայնքի դպրոցի տնօրինության և տեղական ինքնակառավարման մարմնի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատման, վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի Վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Կանադայի կողմից ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի համայնքային կազմակերպիչները: Անմիջական վարչական և ծրագրային վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության համապատասխան բաժինների, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Կանադայի գրասենյակի կողմից:<br>Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: |

Լիանա Մարգարյան
Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական
Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտնի [illegible] ղեկավար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 665 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 3/3.8-1/11162-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 01/5313-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 03/07.2/9417-12, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N 01/3.1/3441-12 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 27-ի N ՎՄ/3-4/8989-12 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի N 01/15/3537-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1687324 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքի գեղարվեստի դպրոցի տանիքի վերանորոգման նպատակով շինանյութի տրամադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2012 թվականի օգոստոսի 17-ին կնքված՝ N WVA/GAV ADP/CM-12/002, LOT 1-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 1687324 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության

հայաստանյան մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Նարինե Մաթևոսյանի կողմից

«23» օգոստոսի, 2012թ.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գեղարվեստի դպրոցի տանիքի վերանորոգման նպատակով շինանյութի տրամադրում»

# ԾՐԱԳԻՐ

<table>
<tr><td>1.</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Ծրագրի նպատակն է աջակցել Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանին պատկանող գեղարվեստի դպրոցին բարելավելու շենքային պայմանները</td></tr>
<tr><td>2.</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</td></tr>
<tr><td>3.</td><td>Բարեգործը</td><td>Վորլդ Վիժն Թայվան աջակցող գրասենյակ,<br>հասցե՝Վորլդ Վիժն Թայվան, 6Ֆ, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան,<br>հեռախոս՝: +886-2-2175-1995</td></tr>
<tr><td>4.</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>հասցե՝ ք. Երևան, Ռ.Մելիքյան 1 ՀՎՀՀ՝ 02528755</td></tr>
<tr><td>5.</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Իրականացման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք:<br>Բնագավառը՝ մշակույթ:</td></tr>
<tr><td>6.</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.687.324 դրամ:</td></tr>
<tr><td>7.</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Բարեգործություն ստացող է հանդիսանում Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանի գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ը</td></tr>
<tr><td>8.</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>17 օգոստոսի 2012թ. – 30 սեպտեմբերի 2012թ.</td></tr>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>
<table>
<tr><th>Միջոցառումների նկարագրությունը</th><th>ժամկետները</th><th>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</th></tr>
<tr><td>Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գեղարվեստի դպրոցի տանիքը վերանորոգելու նպատակով շինանյութի տրամադրում</td><td>Օգոստոս-Սեպտեմբեր, 2012</td><td>1.687.324 դրամ</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու</td><td>Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գեղարվեստի դպրոցի տանիքի վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ են հետևյալ շինանյութերը.</td></tr>
</table>



<table>
<tr><td></td><td>ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>
<table>
<tr><th>հ/հ</th><th>Անվանումը</th><th>Չ/Մ</th><th>Միավորի քանակը</th></tr>
<tr><td>1</td><td>Պրոֆ. Ցինկ. Թիթեղից ԿՊ-21-0.6 մմ հաստ</td><td>մ$^2$</td><td>420.00</td></tr>
<tr><td>2</td><td>Ցինկապատ թիթեղ 0.6 մմ</td><td>մ$^2$</td><td>18.00</td></tr>
<tr><td>3</td><td>Ց/թիթեղ 0.6մմ</td><td>մ$^2$</td><td>23.00</td></tr>
<tr><td>4</td><td>Ց/թիթեղ 0.6մմ</td><td>մ$^2$</td><td>5.0</td></tr>
<tr><td>5</td><td>Ցինկապատ թիթեղ 0.6 մմ</td><td>մ$^2$</td><td>120</td></tr>
</table>
Վերոնշյալ շինանյութերի մատակարարումը իրականացվելու է բաց մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Արաման Սթոուն Սթայլ » ՍՊԸ կողմից:<br>Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գեղարվեստի դպրոցի տանիքի վերանորոգման նպատակով շինանյութի տրամադրման համար նախատեսված է 1.687.324 դրամ:
</td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան հասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ:</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին տարեկան հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</td></tr>
</table>

Հուսիկ Սարգսյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»

միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի

Գեղարքունիքի զարգացման ծրագրի ղեկավար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 666 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 20-ի N 3/3.8-1/11303-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 31-ի N 02/5399-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N ՖԲ/ԱնՄ-5/6045-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 30-ի NՎՄ/3-4/9131-12 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2012 թվականի օգոստոսի 31-ի N 01/14. 1/2778-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1261125 դրամ ընդհանուր արժողությամբ «Խաղահրապարակի մատակարարում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի համայնք» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջի Սթայլ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 90019529) 2012 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N WVA/APAR ADP/PG-12/001-Additional պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական կոնստրուկցիաներով խաղասարքերի մատակարարում և տեղադրում՝ 1261125 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական
Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
Տնօրենի ժ/պ Նաիրա Մաթևոսյան
24-ը օգոստոսի, 2012թ.

«Խաղահրապարակի մատակարարում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնք»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Արագածոտնի մարզի Ապարան համայնքի մեկ թաղամասում տեղադրել խաղահրապարակ՝ այդ թաղամասի երեխաների համար ազատ ժամանցի բարենպաստ պայմաններ ստեղծելու համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արագածոտնի մարզի Ապարան համայնք:<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 1.261.125 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունմեկ հազար հարյուր քսանհինգ) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Թայվանի աջակցող գրասենյակ: Ֆինանսավորումը ստացվել է 2011թ.-ի հոկտեմբեր ամսին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2012թ.-ի հոկտեմբերի 15-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Արագածոտն մարզի Ապարան համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ.-ի օգոստոսի 22-ից հոկտեմբերի 15-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է խաղահրապարակի մատակարարումն իրականացնել Ապարան համայնք մինչև 2012թ.-ի հոկտեմբերի 6-ը: Խաղահրապարակի ընդհանուր |



| | | |
|---|---|---|
| | | արժեքը կազմում է՝ 1.261.125 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունմեկ հազար հարյուր քսանհինգ) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Ջի Սթայլ» ՓԲԸ-ի հետ (պայմանագրի և հավելվածների օրինակները կցվում են): Ստորև ներկայացվում է մատակարարվող խաղահրապարակը ըստ խաղաարքերի. |

| h/h | Խաղաարքի անվանումը | Քանակը | Արժեքը |
|---|---|---|---|
| 1 | Սահարան աշտարակով | 1 հատ | 211 125 |
| 2 | Կարուսել «Սոլնիշկո» /6 տեղանոց, 3-10 տարեկան/ | 2 հատ | 420 000 |
| 3 | Շղթաներով ճոճանակ, 2 տեղ, կախովի | 1 հատ | 200 000 |
| 4 | Շղթաներով փոքր ճոճանակ, 2 տեղ, կախովի | 2 հատ | 230 000 |
| 5 | Զսպանակներով ճոճանակ – կշեռք, 2 տեղ | 2 հատ | 200 000 |
| | | Ընդամենը | 1 261 125 |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունը համագործակցում է Արագածոտնի մարզի Ապարան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի Վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Կանադայի կողմից ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի համայնքային կազմակերպիչները: Անմիջական վարչական և ծրագրային վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության համապատասխան բաժինների, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Կանադայի գրասենյակի կողմից: Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: |

Լիանա Մ[illegible]

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական
Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտնի մարզային ծրագրի ղեկավար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 667 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-2/11339-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 1/06/646-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 30-ի N ՎՄ/3-6/9115-12 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով ավստրիական «PRINOTH» GMBH կազմակերպությունից ձեռք բերված դահուկային սպորտի պարագաների ու ճոպանուղու պահեստամասերի (1 տեղ, 7 կգ ընդհանուր քաշով, 422.31 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 169 եվրո, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռն անհատույց հանձնվելու է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեին դահուկային սպորտի հետագա զարգացման նպատակով:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 668 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N3)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-2/11341-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N ԴԴ/22/8455-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 28-ի N ՎՄ/3-6/9042-2 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից անհատ բարերար Անդրեյ Ռապոպորտի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բժշկական սարքավորումների և պարագաների (10 տեղ, 195 կգ ընդհանուր քաշով, 3047523.73 ՌԴ ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 669 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N Մ-059-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N 3/3.8-1/11135-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 27-ի N ՎՄ/3-4/8987-12 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2012» ծրագրի մասին» N Մ-059-Ա որոշմամբ (2012 թվականի մայիսի 21-ի N Մ-377-Ա որոշման խմբագրու-թյամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վերսուս Ստուդիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00842355) 2012 թվականի օգոստոսի 20-ին կնքված՝ N Ծ-05/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատրաստել Հայաստանի և Ղարաբաղի մասին պատմող 5 հատ 5 րոպեանոց տեսաֆիլմ՝ «TELETON 2012»-ի համար ու թարգմանել, ձայնագրել և հնչյունավորել 12 սյուժե՝ «Ձեռք ձեռքի» հաղորդաշարից ու «TELETON 2012»-ի համար պատրաստված ֆիլմերը՝ 7440000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 670 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-1/11340-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 30-ի N ՎՄ/3-4/9134 -12 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. Էյ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինդաստրիալ քոմփոնենթս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02606879) 2012 թվականի օգոստոսի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական ներկերի մատակարարում՝ 1500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 671 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՈՒ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-2/11352-12, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2012 թվականի օգոստոսի 31-ի N ԳԲ/04.2/4513-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 31-ի N ՎՄ/3-6/9201-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով ֆրանսիական «LUDENDO» և «ALCYON» կազմակերպություններից ձեռք բերված ու «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված խաղալիքների և 75 լիտր անասնաբուժական պատվաստամիջոցի՝ մագնեզիումի սուլֆատի (18 տեղ, 178 կգ ընդհանուր քաշով, 4755.5 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 534 եվրո, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Խաղալիքները անհատույց հանձնվելու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը, իսկ 75 լիտր անասնաբուժական պատվաստամիջոցը՝ «Հիմնատավուշ» բարեգործական հիմնադրամին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-672-Ա**
**քաղ. Երևան**

## «ՔՐՈՆԻՄԵՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 18-ի N 3/3.8-1/10768-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 16-ի N 02/5016-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի օգոստոսի 15-ի N 04/07.2/8898-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 15-ի N ՎՄ/3-4/8638-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Այգեստան 5-րդ փողոց, տուն 15, ՀՎՀՀ՝ 02600555) իրականացվող՝ 70 մլն դրամ ընդհանուր արժեքով «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը



մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Քրոնիմետ բարեգործական հիմնադրամի

Տնօրեն Աննա Մեղրակյան

21 օգոստոսի 2012թ.

## «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերանորոգել «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի առաջին հարկն ամբողջությամբ և երկրորդ հարկի կեսը: Ուսումնական սենյակներում և միջանցքներում կկատարվեն ընդհանուր հարդարման աշխատանքներ, կփոխարինվեն հատակները, հին դռներն ու պատուհանները կփոխարինվեն մետաղապլաստե դռներով և պատուհաններով: Կփոխարինվի էլեկտրասնուցման համակարգը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝55-43-05, 098 98-99-13 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝55-43-05, 098 98-99-13 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Քաղաք Կապան, «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ: Բնագավառը՝ կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 70.000.000 (յոթանասուն միլիոն) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Անհրաժեշտ գումարները առկա են հիմնադրամի հաշվին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2012թ.-ի դեկտեմբերի 1-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ: Հասցեն՝ ք. Կապան, Վարդաբերդի 27 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ.-ի օգոստոսի 15-ից մինչև դեկտեմբերի 1-ը: |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Վերանորոգման աշխատանքների իրականացման համար պայմանագրեր կկնքվեն կապալառու շինարարական կազմակերպության հետ կատարվելիք աշխատանքների ամբողջ ծավալի համար՝ իրենց նյութերով: Շինանյութերի առանձին ձեռքբերումներ չեն լինելու: Մինչև հոկտեմբերի 1-ը նախատեսվում է ավարտել երկրորդ հարկի վերանորոգման աշխատանքները՝ 25.000.000 (քսանհինգ միլիոն) դրամ արժողությամբ, որից մոտ 15.000.000 դրամ կկազմի նյութական մասի արժեքը, իսկ մոտ 10.000.000 դրամ կծախսվի շինարարական աշխատանքների կազմակերպման վրա: Առաջին հարկի վերանորոգումն նախատեսվում է սկսել հոկտեմբերին և ավարտել մինչև դեկտեմբերի 1-ը՝ 45.000.000 (քառասունհինգ միլիոն) դրամ արժողությամբ, որից մոտ 27.000.000 դրամ կկազմի նյութական մասի արժեքը, իսկ մոտ 18.000.000 դրամ կծախսվի շինարարական աշխատանքների կազմակերպման վրա: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար շինարարական աշխատանքների կատարման պայմանագրեր է կնքվելու «Արխինովա» ՍՊԸ կազմակերպության հետ: Նախատեսված են ընդհանուր հարդարման աշխատանքներ, հատակների փոխարինում, դռների և պատուհանների փոխարինում: Կատարվելիք աշխատանքների ընդհանուր արժեքը գնահատվում է 70.000.000 (յոթանասուն միլիոն) դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է Կրթության և գիտության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Շինարարական աշխատանքների վերահսկողությունը կիրականացվի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Ծրագրի իրականացման հաշվետվությունները կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-673-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 15-ի N 3/3.8-2/10656-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 14-ի N ԴԴ/22/8025-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 17-ի N ՎՄ/3-6/8748-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների (18 տեղ, 5840 կգ ընդհանուր քաշով, 952639.09 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-674-Ա
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 10-ի N 3/3.8-2/10519-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 7-ի N ԴԴ/22/7774-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 9-ի N ՎՄ/3-6/8467-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (4 տեղ, 553.4 կգ ընդհանուր քաշով, 179360 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2280.04 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-675-Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄՆ-Ի ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 1-ի N 3/3.8-2/10054-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 30-ի N ՎՄ/3-6/8092-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից (ԱՄՆ, Գլենդել, Փասիֆիք պողոտա, N 1101) իր հայաստանյան ներկայացուցչության միջոցով (ՀՀ, քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053) իրականացվող՝ 1507816.54 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից՝ իր հայաստանյան ներկայացուցչության հասցեով ուղարկված բեռը (47 տեղ, 5314 կգ ընդհանուր քաշով, 1498166.54 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8150 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արմեն Գյուլխասյանի կողմից

«23» հուլիսի 2012

Մարդասիրական օգնություն Հայաստանին

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից դոնորներից ստացված մարդասիրական օգնության հավաքագրում, առաքում Հայաստան, ստացում և համապատասխան ձևակերպումների իրականացում ու բաշխում շահառու կազմակերպություններին: Մարդասիրական օգնության նպատակներն ըստ կազմակերպությունների նկարագրված են կից ներկայացված շահառուների բաշխման ցանկում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններ |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամ (1101 Ն. Փասիֆիք պողոտա, Գլենդել, Կալիֆորնիա 91202) և ըստ կից ցանկի |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամը՝ հայաստանյան ներկայացուցչության միջոցով (քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ԼՂՀ՝ կրթության, առողջապահության ոլորտներ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,507,816.54 ԱՄՆ դոլար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ստացող կազմակերպությունների ցանկը ներկայացվում է կից հավելվածով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012 թվականի հուլիսի 23-ից մինչև սեպտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետներ, | Բեռների ստացում, մաքսային ձևակերպում և բաշխում շահառու կազմակերպություններին 2012 թվականի հուլիսի 23-ից մինչև սեպտեմբերի 30-ը: |

11/26.10

| | | |
|---|---|---|
| | անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1,507,816.54 ԱՄՆ դոլար |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծվող ապրանքների ցանկը ներկայացվում է կից հավելվածով՝<br>5314 կիլոգրամ բեռ<br>1,498,166.54 ԱՄՆ դոլար արժեքով<br>Տեղափոխում՝ 8,150.00 ԱՄՆ դոլար |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Արովյանի մաքսային պահեստի ծախսեր՝ 1500.00 ԱՄՆ դոլար, |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվելու ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամին և օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՄՀՀ ԲԵՌ 269
Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն
Ալեք Մանուկյան 9, 2-րդ հարկ
Երևան, 0070 Հայաստան
Հեռ.՝ 10-51-20-50
Բջջ.՝ 91-42-51-21
Պատասխանատու՝ Արմեն Գյուլխասյան

Մարդասիրական օգնություն Հայաստանին
Շահառուների բաշխման ցանկ

| ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏՍ /SKIDS | Քաշ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ղազարյան Աշոտ - Համընդհանուր Բարեգործական Միություն | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Հայաստանի ներկայացուցչություն, Հասցե՝ Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479 | բժշկական սարքավորումը և պարագաները, նախատեսված են ՀԲԸՄ աջակցությամբ հիմնված ԵՊԲՀ-ի Ջեֆերսոնի անվան ռադիոլոգիայի կենտրոնում ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար: | Բեռը նվիրաբերության պայմանագրով հանձնվելու է ԵՊԲՀ-ին: | Հակոբյան Մերոն | Բժշկական սարքեր և պարագաներ | SC 269-07 | | 1 | 235 | 1,500.00 |
4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

*Դիակոնիա բարեգործական հիմնադրամի*

*տնօրեն Բ. Զամբազյանի կողմից*

«24»-ը օգոստոսի 2012թ.

## «Ծաղկահովիտ բժշկական կենտրոն ՓԲԸ-ն մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում».

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ «Ծաղկահովիտ բժշկական կենտրոն» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի ծննդատան վերանորոգում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հոլանդիայի «Մենսենկինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդերլանդներ, ք. Հարդերվայք 3842 DR, Օուստայնդե 23) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ ( ՀՀ, ք. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ 00068196) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, գ. Ծաղկահովիտ Առողջապահական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2637195 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Ծաղկահովիտ բժշկական կենտրոն» ՓԲԸ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ. օգոստոսի 1-ից մինչև 2012թ.-ի սեպտեմբերի 15-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2012թ. օգոստոսի 1-ից մինչև 2012թ. սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում «Ծաղկահովիտ բժշկական կենտրոն» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիականան բաժանմունքի ծննդատան վերանորոգման, սալիկապատման աշխատանքներ՝ 2637195 դրամ ընդհանուր արժողությամբ |

Ձ. 11/2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է ճնարանի վերանորոգման իրականացման պայմանագիր, որի արժեքը կազմում է 2637195 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի մարզպետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունների ներկայացում «Մենսենկինդերեն» բարեգործական հիմնադրամին<br>Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում Հայաստանի Հանրապետության Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին |

Կազմեց՝ «Դիակոնիա» բ/հ-ի փոխտնօրեն Վ. Ավագյան
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 697 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 22-ի N 3/3.8-2/10987-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 21-ի N ԴԴ/22/8272-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի օգոստոսի 21-ի N 03/07.2/9155-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 20-ի NՎՄ/3-6/8778-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Առողջապահության Ազգային ինստիտուտների Հոգեկան Առողջության Ազգային ինստիտուտի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հասցեով ստացված բեռի (գիտահետազոտական նպատակների համար նախատեսված մարդու ԴՆԹ-ի նմուշներ՝ 1 տեղ, 20 կգ ընդհանուր քաշով, 100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 234 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումները ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-** 698 **-Ա**
**քաղ. Երևան**

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 24-ի N 3/3.8-1/9655-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 02/4524-12, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2012 թվականի հուլիսի 25–ի N 01/3.1/3000-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 24-ի N ԱԱ/3-4/7884-12 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2012 թվականի հուլիսի 25-ի N 01/13/2472-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 385.875.060 դրամ արժողությամբ «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված եռակողմ պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Մեծարենց 88ա, ՀՎՀՀ՝ 01831375) 2012 թվականի մայիսի 16-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքում կատարել խոտածածկի և ըստ նախագծի պատվիրատուի կողմից տրամադրված բույսերով լանդշավտի իրականացման աշխատանքներ՝ 32.137.900 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Մեծարենց 88ա, ՀՎՀՀ՝ 01831375) 2012 թվականի մայիսի 16-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքի կանաչապատման համար կատարել անհրաժեշտ ոռոգման համակարգի անցկացման աշխատանքներ՝ 18.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Վ. Համբարձումյան փող., շ. 10, բն. 22, ՀՎՀՀ՝ 00250089) 2012 թվականի մայիսի 29-ին կնքված եռակողմ N 09Շ/012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանին հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 335737160 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին :

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՄՈՒՇԵՂ [illegible] ԿՈՂՄԻՑ

«22» օգոստոսի 2012 թ.

«Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

11/6

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է բարեկարգել և կանաչապատել «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք, բնագավառը՝ մշակութային |
| 6. | Ծրագրի բյուջեն | 385 875 060 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռի միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 հուլիսի, 2012թ. - 31 դեկտեմբերի, 2012թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքի բարեկարգում և կանաչապատում 385 875 060 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքներն իրականացվում են՝<br>1.Բարեկարգման աշխատանքներ (հարակից տարածքի հարթեցում,անցուղիների պատրաստում, ճանապարհների ասֆալտապատում), որն իրականացվում է «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 10 շենք, 22 բն. ՀՎՀՀ 00250089, պայմանագիր թիվ 09Շ/012, կնքված՝ 29.05.2012թ, 335 737 160 ՀՀ դրամով:<br>2.Խոտածածկի և բույսերի տնկման աշխատանքներ, որն իրականացվում է «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք.Երևան, Մ.Մեծարենց 88ա, ՀՎՀՀ 01831375), պայմանագիր կնքված 16.05.2012թ., 32 137 900 ՀՀ դրամով,<br>3.Ոռոգման համակարգի անցկացման աշխատանքներ, որն իրականացվում է «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք.Երևան, Մ.Մեծարենց 88ա, ՀՎՀՀ 01831375), պայմանագիր կնքված 16.05.2012թ.,18 000 000 ՀՀ դրամով, |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքը բարեկարգել և կանաչապատել՝ 385 875 060 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքներն իրականացվում են՝<br>1. «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 10 շենք, 22 բն. ՀՎՀՀ 00250089, պայմանագիր թիվ 09Շ/012, կնքված՝ 29.05.2012թ, 335 737 160 ՀՀ դրամով, բարեկարգման աշխատանքներ:<br>2 . «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք.Երևան, Մ.Մեծարենց 88ա, ՀՎՀՀ 01831375), պայմանագիր կնքված 16.05.2012թ., 32 137 900 ՀՀ դրամով, խոտածածկի և բույսերի տնկման աշխատանքներ:<br>3. «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք.Երևան, Մ.Մեծարենց 88ա, ՀՎՀՀ 01831375), պայմանագիր կնքված 16.05.2012թ.,18 000 000 ՀՀ դրամով, ոռոգման համակարգի անցկացում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արմավիրի մարզպետարանի և Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-699-Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Առաքելություն Արևելք» միջազգային օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի 2012 թվականի հուլիսի 25-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 1-ի N 3/3.8-1/10101-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նա-խարարության 2012 թվականի հուլիսի 31-ի N ԴԴ/22/7524-12 ու Հայաստանի Հանրապե-տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 2-ի N ՎՄ/3-4/8218-12 եզրակացությունները,*

***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ - ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին N Մ-318-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-738-Ա և 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-862-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը՝

1) ծրագրի 9-րդ կետի 4-րդ ենթակետում «101.651 եվրո» բառերը փոխարինել «44.651 եվրո» բառերով.

2) ծրագրի 10-րդ կետի 7-րդ և 10-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | Ապրանքի/ծառայության անվանումը | 3 տարվա համար | Նախատեսվող գինը, եվրո | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին տարի (11.01.2010-30.09.2010) | 2-րդ տարի (01.10.2010-30.09.2011) | 3-րդ տարի (01.10.2011-30.09.2012) | ընդամենը |
| 7. | Տեղեկատվական կրթական տպագիր նյութեր | 178,259 | 9,120 | 9,798 | 12,672 | 31,590 |
| 10. | Ավտոմեքենա (ավտոմեքենաները ձեռք են բերվելու ՀՀ ներքին շուկայից) | 10 | - | 112,000 | 30,000 | 142,000 |



3) ծրագրի 10-րդ կետում լրացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

| | Ապրանքի/ծառայության անվանումը | Նախնակ. 3 տարվա համար | Նախատեսվող գինը, եվրո | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին տարի (11.01.2010-30.09.2010) | 2-րդ տարի (01.10.2010-30.09.2011) | 3-րդ տարի (01.10.2011-30.09.2012) | ընդամենը |
| 14. | Դեղորայք, բժշկական պարագաներ և բժշկական սարքավորումներ | 50,000 | - | - | 25,000 | 25,000 |

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-700Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ (N 1)

(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 17-ի N 3/3.8-2/10762-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 16-ի N ԴԴ/22/8094-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 16-ի N ՎՄ/3-6/8665-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով ստացված բեռը (Ծծմբաթթու - 2 տուփ, 1 տեղ, 2 կգ քաշով, 160.36 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 122.7 եվրո, «Ջվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-701-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականիօգոստոսի 3-ի N 3/3.8-2/10213-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 6-ի N ԴԴ/22/7692-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 6-ի N ՎՄ/3-6/8376-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով ստացված բեռը (դեղեր՝ դիդանոզին 250 մգ, N 30–17 տուփ, 1 տեղ, 2 կգ քաշով, 221 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3009 հնդկական ռուփի, «Ջվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 702-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 3-ի N 3/3.8-2/10214-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 6-ի N ԴԴ/ 22/7693-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 7-ի N ՎՄ/3-6/8414-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռը (դեղորայք՝ կապրիոմիցին 1 գ-20000 սրվակ, 35 տեղ, 591 կգ քաշով, 160000 ԱՄՆ-ի դոլար արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» Մ/Տ) ներ-մուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-703-Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԵՀԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 24-ի N 3/3.8-1/9620-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 02/4525-12, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2012 թվականի հուլիսի 24-ի N 03/13.2/3435-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 24-ի N ԱԱ/3-4/7886-12 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2012 թվականի հուլիսի 26-ի N 01/04.2/2485-12 եզրակացությունները,*

***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 1.956.400.000 դրամ արժողությամբ «Վեհարանի շենքի վերակառուցման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Դալմա շին» ՍՊԸ-ի հետ ( ՀՎՀՀ՝ 07203422) 2012 թվականի ապրիլի 13-ին կնքված եռակողմ N 9 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի շենքի վերակառուցում՝ 1.846.400.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ-ի «ԿԵՆՏՐՈՆ-ԱՐԵՎՄՏՅԱՆ» մասնաճյուղի Էջմիածնի տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2008 թվականի հունվարի 1-ին կնքված N 150995-43 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հուլիսի 10-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 20.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Էջմիածնի ԳԳՄ-ի մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի հունվարի 3-ին կնքված՝ N 10002082749 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հուլիսի 10-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը գազի մատակարարում՝ 90.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«22» Օգոստոսի 2012 թ.

Վեհարանի շենքի վերակառուցման

**ԾՐԱԳԻՐ**

11/7

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Վեհարանի շենքի վերակառուցումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | «Տաշիր» ԲՀ, ք. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203481 |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք, բնագավառը՝ հոգևոր |
| 6. | Ծրագրի բյուջեն | **Ծրագրի ընդհանուր բյուջեն 1,956,400,000 ՀՀ դրամ է**<br>Շինարարություն՝ 2012թ. III եռամսյակ- 250.000.000 դրամ, IV եռամսյակ- 200.000.000 դրամ,<br>2013թ. I եռամսյակ-250.000.000 դրամ, II եռամսյակ- 450.000.000 դրամ, III եռամսյակ-450.000.000 դրամ, IV եռամսյակ- 246.000.000 դրամ:<br>Կազմակերպական ծախսեր՝ 2012թ. III եռամսյակ- 15.000.000, IV-15.000.000<br>2013թ. I եռամսյակ- 20.000.000 դրամ,II եռամսյակ- 20.000.000դրամ, III եռամսյակ- 20.000.000 դրամ, IV եռամսյակ-20.000.000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռի միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 հուլիսի, 2012թ. – 31 դեկտեմբերի, 2013թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է վերակառուցել Վեհարանի շենքը 1 846 400 000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ, որից<br>1) Քանդման աշխատանքներ- 58,800,000 դրամ, աշխատանքների ավարտման ժամկետը 12.30.2012թ.<br>2)Հողային աշխատանքներ- 32,600,000 դրամ, աշխատանքների ավարտման ժամկետը 07.30.2012թ.<br>3) Համաշինարարական աշխատանքներ-1,755,000,000, աշխատանքների ավարտման ժամկետը 12.30.2013թ.<br>Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Դալմա շին» ՍՊԸ-ի (ՀՀ. ք. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203422) կողմից, պայմանագիր թիվ 9, կնքված 13.04.2012թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է վերակառուցել Վեհարանի շենքը 1 846 400 000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Դալմա շին» ՍՊԸ-ի (ՀՀ. ք. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203422) կողմից, պայմանագիր թիվ 9, կնքված 13.04.2012թ.: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Գազի ծախս՝ 90 000 000 ՀՀ դրամ, որից 2012թ. – 25 000 000 դրամ, 2013թ. – 65 000 000 դրամ՝ առանց ԱԱՀ, պայմանագիր թիվ 10002082749, կնքված 03.01.2008թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Հայռուսգազարդ» ՓԲԸ Էջմիածնի ԳԳՄ-ի միջև:<br>Ջրի ծախս՝ 20 000 000 ՀՀ դրամ, որից 2012թ. – 5 000 000 դրամ, 2013թ. – 15 000 000 դրամ՝ առանց ԱԱՀ, պայմանագիր թիվ 150995043, կնքված 01.01.2008թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ «Կենտրոն-Արևմտյան» մասնաճյուղի Էջմիածնի տեղամասի միջև:<br>Կազմակերպական ծախսերը կազմում են ծրագրի ընդհանուր բյուջեի 5,95%-ը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Արմավիրի մարզպետարանի և Վաղարշապատ քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

11/7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 704 -Ա**
**քաղ. Երևան**

## «ԵՐԵՎԱՆԻ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 119 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-099-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 31-ի N 3/3.8-1/10025-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 3 -ի N 02/4738-12, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 16/5815-102, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի օգոստոսի 3–ի N 04/07-1/8505-12, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2012 թվականի օգոստոսի 1-ի N 03/13.2/3573-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-4/8112-12 և Երևանի քաղաքապետի 2012 թվականի օգոստոսի 8–ի N 02/16-37828Հ եզրակացությունները,*

***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող՝ 115000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր ուսումնական մասնաշենքի նախագծում և կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծ 64, ՀՎՀՀ՝ 00414389) կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝



«ՀՈՎԱՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09210409) 2011 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված՝ N 20/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում նոր ուսումնական մասնաշենքի նախագծում և կառուցում՝ 57560726.84 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծպեղնային հարկի կառուցում ծրագրի մասին» N Մ-099-Ա որոշումը:

4. «Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծրագրի ավարտից հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
''Երևանի Բենյամին Ժամկոչյանի անվան N119 ավագ դպրոց ՊՈԱԿ''- ի
տնօրեն՝ Հովհաննես Կարապետյանի կողմից
''11''......07........... 2012թ.

''Երևանի Բենյամին Ժամկոչյանի անվան N119 ավագ դպրոց ՊՈԱԿ''-ի նոր ուսումնական մասնաշենքի նախագծում և կառուցում

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Երևանի Բենյամին Ժամկոչյանի անվան N119 ավագ դպրոց ՊՈԱԿ''-ի նոր ուսումնական մասնաշենքի նախագծում և կառուցում, որը կավելացնի կրթական գործունեության համար հրատապ անհրաժեշտ մակերես: |
| 2 | Ծրագրի բարեգործական նպատակը | Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը՝ օրենքով սահմանված կարգով ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, ինչը անհրաժեշտ է առաջարկվող ներդրման սահմանափակ լինելու պատճառով: |
| 3 | Բարեգործը | Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցացիա AIMF - Association Internationale des Maires Francophones 9, rue des Halles 75001 Paris Tel .: 01 44 88 22 88 Fax : 01 40 39 06 62<br>Courriel : sp@aimf.asso.fr |
| 4 | Ծրագիրը կատարողը | Երևանի Բ.Ժամկոչյանի անվան հ.մ. 119 ավագ դպրոց ՊՈԱԿ<br>Դպրոցի հասցեն - 0005, Երևան, Տիգրան Մեծ, 64<br>Էլեկտրոնային հասցեն - ecole119@mail.ru<br>Բանկային տվյալները - ''Հայէկոնոմբանկ'' Էրեբունի մասնաճյուղ, h/h 163068555305<br>Հարկային կոդը - 00414389<br>Հեռախոս - 010573740; 010573730<br>Տնօրեն - Հովհաննես Հարությունի Կարապետյան |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ''Երևանի Բենյամին Ժամկոչյանի անվան N119 ավագ դպրոց ՊՈԱԿ'', կրթության բնագավառ, ք. Երևան Էրեբունի համայնք փ. Տիգրան Մեծ 64 |
| 6 | Ծրագրի բյուջեն | 115.000 /Մեկ հարյուր տասնհինգ հազար/ եվրոյին համարժեք դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 365 օր, 20.10.2011թ. - 20.10.2012թ |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախատեսված է նոր ուսումնական մասնաշենքի նախագծումը և կառուցումը, ըստ նախահաշվի |
| 10 | Ձեռք բերվող / ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսված է նոր ուսումնական մասնաշենքի նախագծումը և կառուցումը, /ըստ նախահաշվի/ 115.000 /Մեկ հարյուր տասնհինգ հազար/ եվրոյին համարժեք դրամ:<br>Շինարարական աշխատանքը կիրականացվի ''ՀՈՎԱԾ ''ՍՊԸ-ի կողմից.<br>''ՀՈՎԱԾ'' ՍՊԸ - ՀՎՀՀ 09210409 - ք. Գորիս, Անկախության, 104<br>Գործունեության հասցեն - ք. Երևան, Թումանյան, 8<br>ՀՀ 160485489514 ''ՎՏԲ Հայաստան Բանկ'' ՓԲԸ<br>Տնօրեն Ա.Հովհաննիսյան |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունը ներկայացվում է՝<br>Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիա AIMF,<br>ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով,<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 705 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 10-ի N ՍՔ/15-1/7904-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 16-ի N 3/3.8-1/10709-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 15-ի N ՎՄ/3-4/8637-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական համա-կարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-ժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-220-Ա և հունիսի 29-ի N Մ-468-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2012 թ. հունիսի 30-ը» բառերը փոխարինել «2012 թ. հոկտեմբերի 30-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-706-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 3/3.8-1/11142-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 23-ի N ՎՄ/3-4/8927-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կետ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00258365) 2012 թվականի հուլիսի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 12.830.712 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սիմ-Սիմ» Գեյթս ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01569011) 2012 թվականի հուլիսի 31-ին կնքված՝ N 011-2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 14 միավոր ներսի և 4 միավոր հրակայուն դռների տեղադրում՝ 500.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Յուգլիֆտ» ԴՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01558429) 2012 թվականի օգոստոսի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քաղ. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում 3 հարկի համար նախատեսված մեկ հատ «KONE» ֆիրմայի արտադրության մարդատար վերելակի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ար և Ար Դիզայն Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2012 թվականի օգոստոսի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քաղ. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում 96 զույգ մետաղյա փոշեներկված պահարանների տեղադրում՝ 5.088.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-707-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-609-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի
դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2012 թվականի օգոստոսի 10-ի N 305 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 15-ի N 3/3.8-210667-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 17-ի N ՎՄ//3-6/8718 -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին (Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)» N Մ-609-Ա որոշման 1-ին կետում «28746 հնդկական ռուփի» բառերը փոխարինել «34860 հնդկական ռուփի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 708-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-618-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2012 թվականի օգոստոսի 14-ի թիվ 312 գրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 21-ի N 3/3.8-1/10889-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 16-ի N ՎՄ/3-6/8669-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին» («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) N Մ-618-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «փոխադրման ծախսերը կազմել են, 280.8 եվրո» բառերը փոխարինել «փոխադրման ծախսերը կազմել են 1501.76 եվրո» բառերով.

2) «208 կգ ընգհանուր քաշով» բառերը փոխարինել «191 կգ ընդհանուր քաշով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 709-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-608-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթու-թյան և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի 2012 թվականի օգոստոսի 8-ի N 02/497 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանս-ների նախարարության 2012 թվականի օգոստոսի 10-ի N 3/3.8-2/10520-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 9-ի N ԱԱ//3-6/8466-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի N Մ-497-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին (Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ)» N Մ-608-Ա որոշման 1-ին կետում «2 տեղ, 22 կգ ընդհանուր քաշով, «Զվարթնոց Մ/Տ» բառերը փոխարինել «1 տեղ, 0.5 կգ ընդհանուր քաշով, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 710 -Ա**
**քաղ. Երևան**

## ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՄԱՔՈՒՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» WE20110560 ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 9-ի N 3/3.8-1/117682-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 01/5304-12, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2012 թվականի օգոստոսի 14-ի N 07/16/4244-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 8-ի N ՎՄ/3-4/8440-12, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 15-ի N 01/14.1/2576-12, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 15-ի N 1/3/1-1/3881-12, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 8-ի N 01/3834-12, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 14-ի N 01/14.2/2882-12 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 14-ի N 01/21/3506-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության (ՀՀ, քաղ. Երևան, Մաշտոցի պողոտա 50 ա, բն. 18, ՀՎՀՀ՝ 01526777) կողմից իրականացվող՝ 297636 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20110560 ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեդի Պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109451) 2012 թվականի հունվարի 10-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության 18 համայնքում խմելու ջրի ջրամատակարարման խողովակների մատակարարման,



մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 62846250 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մանուշ-Արմեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04220209) 2012 թվականի հունվարի 10-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 10-ից մինչև սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության համայնքներում 36 ցայտաղբյուրի մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 6858000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Շիրակի, Կոտայքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

11/24

Ծրագրի բյուջեն հաստատված է
«ՎՕՍ Բարեգործություններ» Կորպորացիայի կողմից
12 դեկտեմբերի 2011թ.
Կորպորացիայի Նախագահ *Rod Stone* Մաքյու Հիպս

# Համայնքներին մաքուր խմելու ջրամատակարարման
# Ծրագիր WE20110560

| | |
|---|---|
| 1.Ծրագրի նպատակը | Ներկայացվող ծրագրի նպատակն է ապահովել և բարելավել խմելու մաքուր ջրի մատակարարումը ՀՀ տարբեր մարզերի 18 համայնքների բնակիչներին: Հայաստանի գյուղերի մեծ մասը խմելու ջրային ցանցերի վերակառուցման կարիք ունի: Առաջարկվող 18 գյուղերի որոշ մասում, խմելու ջուրը մատակարարվում է հնամաշ՝ օգտագործման համար ոչ պիտանի խողովակներով: Բացի նրանից, որ դա վտանգավոր է մարդու առողջության համար, այդ խողովակների մեծ մասը նաև գտնվում են շարքից դուրս եկած վիճակում, ինչը նպաստում է ջրի կորստին և ախտոտմանը: Ծրագրով նախատեսվում է նաև համայնքների բնակիչների համար հիգիենայի գծով խորհրդատվությունների տրամադրում: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակն է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններից: |
| 3.Բարեգործը | Բարեգործը «Վերջին Օրերի Սրբերի Բարեգործություններ» Կորպորացիան է, հասցեն՝ ԱՄՆ-ի Յուքա նահանգ, Սոլթ Լեյք Սիթի քաղաք: |
| 4.Ծրագրի կատարողը | Ծրագրի կատարողը ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունն է (այսուհետ նաև Կազմակերպություն), ՀՎՀՀ 01526777, իրավաբանական հասցեն՝ Երևան, Մաշտոցի 50 շենք, բն 18, գործունեության հասցեն՝ Երևան, Վրացական 5:: |
| 5.Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | 2012թ-ի ջրագծերի վերանորոգման սույն ծրագիրը իրականացվելու է ՀՀ 18 համայնքներում (դրանք ներկայացված է 7-րդ կետում): Համայնքներում իրականացվելու է խմելու ջրագծերի վերանորոգման աշխատանքներ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել խմելու ջրամատակարարման բնագավառում: |
| 6.Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 297636 (երկու հարյուր իննսուն յոթ հազար վեց հարյուր երեսուն վեց) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Ծրագրի բյուջեն հաստատվել է Կորպորացիայի հոգաբարձուների խորհրդի կողմից: Յուրաքանչյուր համայնքի ծրագրի բյուջեն հաստատվել է ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի կենտրոնական գրասենյակում: |
| 7.Բարեգործություն ստացողները | Բարեգործություն ստացողներն ըստ մարզերի և ըստ համայնքների հետևյալն են. |

| հ/հ | Մարզեր | Գյուղերի անվանումը | բնակչ. թիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Արագածոտնի | Սիփան | 460 |
| 2 | Շիրակ | Լեռնակերտ | 1610 |
| 3 | Արագածոտնի | Ավշեն | 630 |
| 4 | Արագածոտնի | Վարդենիս | 1610 |
| 5 | Արարատ | Մխչյան | 1840 |
| 6 | Արագածոտնի | Ափնա | 860 |
| 7 | Արարատ | Հայանիստ | 2850 |
| 8 | Արարատ | Ջրակ | 2250 |
| 9 | Արագածոտնի | Ծաղկաշեն | 830 |
| 10 | Արարատ | Վարդաշատ | 690 |
| 11 | Շիրակ | Պեմզաշեն | 3400 |
| 12 | Շիրակ | Հառիճ | 1940 |
| 13 | Կոտայք | Բուժական | 950 |
| 14 | Շիրակ | Նոր Կյանք | 2050 |
| 15 | Կոտայք | Զորագյուղ | 465 |
| 16 | Շիրակ | Սարատակ | 1780 |
| 17 | Տավուշ | Գետահովիտ | 1460 |
| 18 | Տավուշ | Վարագավան | 1230 |
| | Ընդամենը | | 26905 |

Համայնքները ընտրվել են կարիքավորության և մեկ բնակչին ընկնող ծախսի հիման վրա; Այն համայնքները, որոնց ջրագծերը չեն գտնվում համայնքի տիրապետության տակ, չեն ընդգրկվել այս ծրագրում, քանի որ ջրամատակարար կազմակերպությունը՝ Ջրմուղը ունի իր սեփական ջրամատակարարման եղանակները: Այս ծրագրից կօգտվի մոտ 26905 մարդ:

11/24

| | |
|---|---|
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը կիրականացվի 2012 հուլիսից և կավարտվի ոչ ուշ քան 2012թ. նոյեմբերի 30-ը: Ծրագրի հիմնական միջոցառումները կիրականացվեն այդ ժամանակաշրջանում: Մինչև այդ ժամանակաշրջանը Ծրագրի իրականացնող Ներկայացուցչությունը ծրագրի մատակարարներ հանդիսացող «Վեդի պլաստ» և «Մանուշ-Արմեն» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն-ներին նրանց հետ կնքված պայմանագրերի համաձայն նախատեսում է վճարել կանխավճար նրանց կողմից Ծրագրի իրականացման համար պահանջվող հումքի նվազագույն քանակի ձեռք բերման համար: Կանխավճարի վճարումը պայմանավորված է մատակարվող ապրանքների քանակի և մատակարարումները պայմանագրերով սահմանված ժամկետներում իրականացնելու հետ: Մատակարարների կողմից մատակարարումները պետք է ավարտվեն մինչև 2012թ. հոկտեմբերի 25-ը: |
| 9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինան-սական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է համայնքներում տեղադրել 30985 մետր պոլիէթիլենային խողովակներ, համայնքներում օգտագործվող շինանյութերի և հողային վերանորոգման աշխատանքների համար նախատեսվում է 36113020 (երեսուն վեց միլիոն վեց հարյուր տասներեք հազար քսան) ՀՀ դրամ:<br>Ծրագրով նախատեսվում է նաև համայնքների բնակիչների համար հիգիենայի գծով խորհրդատվությունների տրամադրում, որի նպատակով Կազմակերպության վարձած մասնագետը առնվազն 2 այցելություն-հանդիպում է կատարելու յուրաքանչյուր համայնք::<br>Համայնքներում նախատեսվում է տեղադրել նաև թվով 36 ցայտաղբյուրներ՝ 6858000 (վեց միլիոն ութ հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ աժեքով: Միջոցառումները կիրականացվեն 2012 հուլիսից և կավարտվեն ոչ ուշ քան 2012թ. նոյեմբերի 30-ը: Պահանջվող ապրանքների մատակարարումները կսկսվեն 2012 հուլիսի 1-ից և կավարտվեն ոչ ուշ քան 2012թ. հոկտեմբերի 15-ը: Միջոցառումները մանրամասն նկարագրված են հավելվածում: |
| 10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի համար անհրաժեշտ բոլոր նյութերը ձեռք են բերվելու տեղական շուկայից:<br>Խողովակները և դրանց մոնտաժման համար անրաժեշտ պարագաները 62846250 (վաթսուն երկու միլիոն ութ հարյուր քառասուն վեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ արժեքով ձեռք են բերվելու «Վեդի պլաստ» ՍՊԸ-ից՝ ՀՎՀՀ 04109451:<br>Ծրագրում ընդգրկված համայնքներում տեղադրվելու են 1-3-ական ցայտաղբյուրներ՝ ընդամենը 36 հատ: Դրանք մատակարավելու, մոնտաժվելու և փորձարկվելու են «Մանուշ-Արմեն» ՍՊԸ կողմից՝ ՀՎՀՀ 04220209: Այս աշխատանքների ընդհանուր արժեքը կազմելու է 6858000 (վեց միլիոն ութ հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ: |
| 11.Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը վարչական ու կազմակերպչական ծախսերի համար հարկային արտոնություններ չի նախատեսում ստանալ, այդ ծախսերը նվիրատվության գումարներից չեն կատարվելու: Ներկայացուցչության երևանի գրասենյակի հետ կապված ծախսերը նույնպես չեն վճարվելու նվիրատվության գումարներից: Ներկայացուցչությունը վճարում է աշխատողների բոլոր հարկերն ու սոցվճարները: Ծրագրի համար ծառայությունների մատուցման քաղաքացիա-իրավական պայմանագրով աշխատելու է միայն ջրային ինժեներ, որի ծառայություններից առաջացող եկամտահարկը և սոցիալական վճարները վճարվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: |
| 12.Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը աշխատելու է անմիջապես յուրաքանչյուր համայնքի, ինչպես նաև համապատասխան մարզպետարանների հետ: Ներկայացուցչությունը համագործակցելու է նաև ՀՀ Կառավարության Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ և ներկայացնելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններն ու տեղեկատվությունը: |
| 13.Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխա- | Ծրագրի վերահսկողությունը իրականացվելու է Ներկայացուցչությունը իր ջրային ինժեների՝ Նշան Հարությունյանի և Ներկայացուցչության լիազորված անձանց՝ Ռոդ և Ջեյն Սթոնների կողմից: |

11/24

| | |
|---|---|
| Նիզմների նկարագրությունը | Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից նշանակված անձի մասնակցությունը ծրագրի վերահսկողության իրականացման գործընթացում մեծապես կողջունվի: |

Ծրագրի լիազորված անձ Ռոդ Սթոն *Rod Stone*

Armenian Representation
01526777

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 711 -Ա**
**քաղ. Երևան**

## ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՄԱՔՈՒՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» WE20120141 ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 9-ի N 3/3.8-1/117678-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 01/5303-12, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2012 թվականի օգոստոսի 14-ի N 07/16/4244-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 8-ի N ՎՄ/3-4/8439-12, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 15-ի N 01/14.1/2577-12, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 15-ի N 1/3/1-1/3882-12, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 8-ի N 01/3833-12, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի օգոստոսի 8-ի N 101/104.3.2/4316-12 ու Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 20-ի N 01.1/04.4/3907-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության (ՀՀ, քաղ. Երևան, Մաշտոցի պողոտա 50ա, բն. 18, ՀՎՀՀ՝ 01526777) կողմից իրականացվող՝ 278882 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20120141 ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեդի Պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109451) 2012 թվականի հունիսի 10-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության 16



համայնքում խմելու ջրի ջրամատակարարման խողովակների մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 60024950 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մանուշ-Արմեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04220209) 2012 թվականի հունիսի 20-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության համայնքներում 36 ցայտաղբյուրի մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 7576720 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Լոռու, Շիրակի ու Վայոց ձորի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

11/25

11/25

Ծրագիրը հաստատված է
«ՎՕՍ Բարեգործություններ» Կորպորացիայի կողմից
18 հունիսի 2012թ.
Կորպորացիայի նախագահ ____ Մաքյու Ջիպս

# Համայնքներին մաքուր խմելու ջրամատակարարման
# Ծրագիր WE20120141

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | Ներկայացվող ծրագրի նպատակն է ապահովել և բարելավել խմելու մաքուր ջրի մատակարարումը ՀՀ տարբեր մարզերի 16 համայնքների բնակիչներին: Հայաստանի գյուղերի մեծ մասը խմելու ջրային ցանցերի վերակառուցման կարիք ունի: Առաջարկվող 16 գյուղերի որոշ մասում, խմելու ջուրը մատակարարվում է հնամաշ` օգտագործման համար ոչ պիտանի խողովակներով: Բացի նրանից, որ դա վտանգավոր է մարդու առողջության համար, այդ խողովակների մեծ մասը նաև գտնվում են շարքից դուրս եկած վիճակում, ինչը նպաստում է ջրի կորստին և ախտոտմանը: Ծրագրով նախատեսվում է նաև համայնքների բնակիչների համար հիգիենայի գծով խորհրդատվությունների տրամադրում: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակն է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններից: |
| 3. Բարեգործը | Բարեգործը «Վերջին Օրերի Սրբերի Բարեգործություններ» Կորպորացիան է, հասցեն` ԱՄՆ-ի Յուտա նահանգ, Սոլթ Լեյք Սիթի քաղաք: |
| 4. Ծրագրի կատարողը | Ծրագրի կատարողը ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունն է (այսուհետ նաև Կազմակերպություն), ՀՎՀՀ 01526777, իրավաբանական հասցեն` Երևան, Մաշտոցի 50 շենք, բն 18, գործունեության հասցեն` Երևան, Վրացական 5: |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Այս ծրագիրը իրականացվելու է ՀՀ 16 համայնքներում (դրանք ներկայացված են 7-րդ կետում): Համայնքներում իրականացվելու են խմելու ջրագծերի վերանորոգման աշխատանքներ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել խմելու ջրամատակարարման բնագավառում: |
| 6. Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 278882 (երկու հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր ութսուն երկու) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Ծրագրի բյուջեն հաստատվել է Կորպորացիայի հոգաբարձուների խորհրդի կողմից: Յուրաքանչյուր համայնքի ծրագրի բյուջեն հաստատվել է ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի կենտրոնական գրասենյակում: |
| 7. Բարեգործություն ստացողները | Բարեգործություն ստացողներն ըստ մարզերի և ըստ համայնքների հետևյալն են. |

| հ/հ | Մարզեր | Գյուղերի անվանումը | բնակչ. թիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Արագածոտն | Արուճ | 1260 |
| 2 | Արագածոտն | Սարալանջ | 430 |
| 3 | Շիրակ | Գետափ | 870 |
| 4 | Շիրակ | Սպանդարյան | 1700 |
| 5 | Արարատ | Բյուրավան | 1400 |
| 6 | Արարատ | Նորամարգ | 1080 |
| 7 | Արագածոտն | Գեղադիր | 1050 |
| 8 | Լոռի | Սվերդլով | 1300 |
| 9 | Վայոց Ձոր | Աղնջաձոր | 930 |
| 10 | Վայոց Ձոր | Չիվա | 1300 |
| 11 | Արագածոտն | Լեռնարոտ | 785 |
| 12 | Արագածոտն | Ագարակավան | 1080 |
| 13 | Արագածոտն | Թթուջուր | 460 |
| 14 | Արագածոտն | Արագածավան | 5200 |
| 15 | Արագածոտն | Արտենի | 4150 |
| 16 | Շիրակ | Մեղրաշեն | 1460 |
| | Ընդամենը | | 24455 |

Համայնքները ընտրվել են կարիքավորության և մեկ բնակչին ընկնող ծախսի հիման վրա: Այն համայնքները, որոնց ջրագծերը չեն գտնվում համայնքի տիրապետության տակ, չեն ընդգրկվել այս ծրագրում, քանի որ ջրամատակարար կազմակերպությունը` Ջրմուղը ունի իր սեփական ջրամատակարարման եղանակները: Այս ծրագրից կօգտվի 24455 մարդ:

| | |
|---|---|
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը կիրականացվի 2012 հուլիսից և կավարտվի ոչ ուշ քան 2012թ. նոյեմբերի 30-ը: Ծրագրի հիմնական միջոցառումները կիրականացվեն այդ ժամանակաշրջանում: Մինչև այդ ժամանակաշրջանը Ծրագրի իրականացնող ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը ծրագրի մատակարարներ հանդիսացող «Վեդի պլաստ» և «Մանուշ-Արմեն» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություններին նրանց հետ կնքված պայմանագրերի համաձայն նախատեսում է վճարել կանխավճար նրանց կողմից Ծրագրի իրականացման համար պահանջվող հումքի նվազագույն քանակի ձեռք բերման համար: Կանխավճարի վճարումը պայմանավորված է մատակարարվող ապրանքների քանակի և մատակարարումները պայմանագրերով սահմանված ժամկետներում իրականացնելու հետ: Մատակարարների կողմից մատակարարումները պետք է ավարտվեն մինչև 2012թ.հոկտեմբերի 25-ը: |
| 9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է համայնքներում տեղադրել 32205 մետր պոլիէթիլենային խողովակներ, օգտագործվող շինա-նյութերի և հողային վերանորոգման աշխատանքների ընդհանուր արժեքը նախատեսվում է 25297900 (քսան հինգ միլիոն երկու հարյուր իննսուն յոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամի չափով: Համայնքներում նախատեսվում է տեղադրել թվով 36 ցայտաղբյուրներ:<br>Ծրագրով նախատեսվում է նաև համայնքների բնակիչների համար հիգիենայի գծով խորհրդատվությունների տրամադրում, որի նպատակով Կազմակերպության վարձած մասնագետը առնվազն 2 այցելություն-հանդիպում է կատարելու յուրաքանչյուր համայնք::<br>Միջոցառումները կիրականացվեն 2012 հուլիսից և կավարտվեն ոչ ուշ քան 2012թ. նոյեմբերի 30-ը: Պահանջվող ապրանքների մատակարարումները կսկսվեն 2012թ. հուլիսի 30-ից և կավարտվեն ոչ ուշ քան 2012թ. հոկտեմ-բերի 25-ը: Միջոցառումները մանրամասն նկարագրված են հավելվածում: |
| 10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի համար անհրաժեշտ բոլոր նյութերը ձեռք են բերվելու տեղական շուկայից:<br>Պահանջվող խողովակները և դրանց մոնտաժման համար անրաժեշտ պարագաները ձեռք են բերվելու «Վեդի պլաստ» ՍՊԸ-ից` ՀՎՀՀ 04109451: Այդ ընկերությանը պետք է վճարվի 60 024 950 (վաթսուն հինգ միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումար:<br>Ծրագրում ընդգրկված համայնքներում տեղադրվելու են 1-3-ական ցայտաղբյուրներ, ընդամենը` 36 հատ: Դրանք մատակարավելու են «Մանուշ-Արմեն» ՍՊԸ կողմից` ՀՎՀՀ 04220209: Այս աշխատանքների ընդհանուր արժեքը կազմելու է 7576720 (յոթ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ:<br>Ծրագրով ապրանքների ներմուծում չի նախատեսվում: |
| 11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը վարչական ու կազմակերպչական ծախսերի համար հարկային արտոնություններ չի նախատեսում ստանալ, քանի որ այդ ծախսերը նվիրատվության գումարներից չեն կատարվելու: ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչության գրասենյակի հետ կապված ծախսերը նույնպես չեն վճարվելու նվիրատվության գումարներից: Ներկայացուցչությունը վճարում է իր աշխատողների բոլոր հարկերը և սոցվճարները: Ծրագրի համար |

11/25

| | |
|---|---|
| | ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատելու է ջրային ինժեները և հիգիենայի գծով մասնագետը, որոնց ծառայություններից առաջացող եկամտահարկը և սոցիալական վճարները վճարվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: |
| 12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը աշխատելու է անմիջապես յուրաքանչյուր համայնքի, ինչպես նաև համապատասխան մարզպետարանների հետ: Ներկայացուցչությունը համագործակցելու է նաև ՀՀ Կառավարության Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ և ներկայացնելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները ու տեղեկատվությունը: |
| 13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը իրականացվելու է ՎՕՍ Բարեգործություններ Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը իր ջրային ինժեների՝ Նշան Հարությունյանի և Ներկայացուցչության լիազորված անձանց՝ Ռոդ և Ջեյն Սթոնների կողմից: Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից նշանակված անձի մասնակցությունը ծրագրի վերահսկողության իրականացման գործընթացում մեծապես կողջունվի: |

Ծրագրի լիազորված անձ Ռոդ Սթոն Rod Stone

01526777

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-712-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՊՀ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՊՀ» ՊՈԱԿ-Ի ԵՎ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԲԵՐԳԵՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՄԱՆՐԵՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 6-ի N 3/3.8-1/10263-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 02/4711-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հուլիսի 30-ի N 03/07-1/8260-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-4/8111-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2012-2014 թվականներին իրականացվող՝ 666000 նորվեգական կրոնին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի և Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետի, մանրէների էկոլոգիայի բնագավառում համագործակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մա-



սին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ կրթության և գիտության նախարարության
"Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ
ռեկտոր Ա. Սիմոնյանի կողմից

.............................................

«26» ....07....... 2012թ.

ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ
և Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետների, մանրէների էկոլոգիայի բնագավառում, համագործակցության

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի շրջանակներում ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ (ԵՊՀ) Կենսաբանության ֆակուլտետի Մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնը, Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետի իր կոլեգաների օգնությամբ, ստեղծելու է մանրէների գիտակրթական բազա՝ էկոլոգիայի և էկոլոգիական կենսատեխնոլոգիայի բնագավառում, ամբիոնի լաբորատորիան հագեցնելու է նոր սարքերով, որոնք հնարավորություն կստեղծեն մանրէների հետազոտման ժամանակակից մոլեկուլային մեթոդների ներդրման համար, մշակելու է "Մանրէների էկոլոգիա" ուսումնական առարկայի ծրագիրը: Նախատեսվում են նաև ԵՊՀ մասնագետների, մագիստրոսների և ասպիրանտների գործուղումներ Բերգենի Համալսրան՝ վերապատրաստման, դասընթացների մասնակցության և համատեղ գիտահետազոտական աշխատանք կատարելու նպատակով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Բարձրագույն կրթության բնագավառում միջազգային համագործակցության Նորվեգական կենտրոն ("Համագործակցություն Եվրասիա 2010-2014" ծրագիր, դրամաշնորհ # CPEA-2011/10081)<br>Norwegian Centre for International Cooperation in Education (SIU)<br>P.O. box 1093, N-5809 Bergen, Norway<br>Tel: +47 55 30 38 00 |



| | | |
|---|---|---|
| | | Fax: +47 55 30 38 01<br>Email: siu@siu.no |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ, 0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՎՀՀ 01506928 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ, Կենսաբանության ֆակուլտետի Մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոն, բնագավառը կրթություն և գիտություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 666000 NOK -նորվեգական կրոն (կամ համարժեք դրամ, ըստ ՀՀ ԿԲ-ի տվյալ օրվա ԱՄՆ դոլար / դրամ փոխարժեքի, քանի որ նորվեգական կողմն գումարը փոխանցելու է ԱՄՆ դոլարներով):<br>Այդ թվում՝<br>**2012 թ. – 301000 NOK** (276000 + 25000 –որը չէր փոխանցվել 2011 թ.-ին ծրագրի ֆինանսավորման ուշացման պատճառով)<br>**2013 թ. – 230000 NOK**<br>**2014 թ. – 135000 NOK** |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարություն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01,09.2012թ-ից մինչև 30.12.2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | **2012 թ.,-ին՝**<br>1. Գիտական սարքերի գնում և ներմուծում, 120000 NOK-ին համարժեք դրամ,<br>2. Գրասենյակային պարագաների և համակարգչային ծրագրերի գնում, 28000 NOK-ին համարժեք դրամ,<br>3. Գրքերի և ամսագրերի գնում և ներմուծում, ծրագրի շրջանակներում ծախսեր հոդվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և թեկնածուական թեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ,<br>4. Գործուղման ծախսեր, 44000 NOK-ին համարժեք դրամ,<br>5. Այլ ծախսեր, 52000 NOK-ին համարժեք դրամ (20000 NOK-ը փոխադրվել է 2011թ.-ից),<br>6. Նախագծի ղեկավարման ծախսեր, [illegible] NOK-ին համարժեք դրամ (5000 NOK-ը փոխադրվել է 2011թ.-ից), [illegible] նախագծի հայկական կողմի համակարգողին, իր հիմնական [illegible], նախագծի գիտական համակարգման և [illegible] հատկացվող տարեկան գումար է,<br>7. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ |

| | | |
|---|---|---|
| | | **2013թ.-ին**<br><br>1. Գրքերի և ամսագրերի գնում և ներմուծում, ծրագրի շրջանակներում ծախսեր հոդվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և թեկնածուական թեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ,<br>2. Միջազգային կոնֆերանսների, սեմինարների և աշխատանքային հանդիպումների կազմակերպում, ինտերնետային ծախսեր (networking), 120000 NOK-ին համարժեք դրամ,<br>3. Գործուղման ծախսեր, 28000 NOK-ին համարժեք դրամ,<br>4. Այլ ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ,<br>5. Նախագծի ղեկավարման ծախսեր, 25000 NOK-ին համարժեք դրամ,<br>6. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ<br><br>2014թ.-ին<br><br>1. Գրքերի և ամսագրերի գնում և ներմուծում, ծրագրի շրջանակներում ծախսեր հոդվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և թեկնածուական թեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ,<br>2. Միջազգային կոնֆերանսների, սեմինարների և աշխատանքային հանդիպումների կազմակերպում, ինտերնետային ծախսեր (networking), 30000 NOK-ին համարժեք դրամ,<br>3. Գործուղման ծախսեր, 28000 NOK-ին համարժեք դրամ,<br>4. Այլ ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ,<br>5. Նախագծի ղեկավարման ծախսեր, 20000 NOK-ին համարժեք դրամ,<br>6. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | **2012 թ.,-ին՝**<br><br>1. Գիտական սարքերի գնում և ներմուծում, 120000 NOK-ին համարժեք դրամ, Այդ թվում՝<br>- Դենատուրացնող ժելէլեկտրաֆորեզային սարքավորում "DCode System for DGGE, Bio Rad", 1 հատ, այսօրվա դրությամբ՝ 66625 NOK + |



| | | |
|---|---|---|
| | | ճանապարհածախսն և մաքսային ձևակերպումները,<br>- Պոլիմերազային շղթայական ռեակցիայի սարք "T100 Thermal Cycler, Bio Rad", 1 հատ, այսօրվա դրությամբ՝41840 NOK + ճանապարհածախսն և մաքսային,<br>- Միկրոկենտրոնախույսակ "Microcentrifuge 5424/5424R, Centrifuge 5424 R, Knob, 24x1.5/2 mL AT rotor, 120 V, 50/60Hz", 1 հատ, այսօրվա դրությամբ՝6695 ԱՄՆ դոլար + ճանապարհածախսն և մաքսային ձևակերպումները,<br>- Քիմիական ռեակտիվներ, սննդամիջավայրեր և լաբորատոր պարագաներ:<br><br>2. Գրասենյակային պարագաների և համակարգչային ծրագրերի գնում, 28000 NOK-ին համարժեք դրամ,<br>3. Գրքերի և ամսագրերի գնում և ներմուծում, ծրագրի շրջանակներում ծախսեր հոդվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և թեկնածուական թեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ,<br>4. Գործուղման ծախսեր, 44000 NOK-ին համարժեք դրամ: Նորվեգիա են գործուղվելու՝ ծրագրի հայկական կողմի համակարգողը և ծրագրի այլ մասնակիցներ, ինչպես նաև ծրագրում ընդգրկված մագիստրոսներ և ասպիրանտներ:<br>5. Այլ ծախսեր, 52000 NOK-ին համարժեք դրամ (20000 NOK-ը փոխադրվել է 2011թ.-ից): Սրանք նախատեսված են ծրագրի կատարման ընթացքում չնախատեսված սարքեր և տեխնիկա գնելու, վերանորոգելու, քիմիական նյութեր և ռեակտիվներ, լաբորատոր այլ պարագաներ գնելու, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ գործուղումների և հանդիպումների կազմակերպման և այլնի համար:<br>6. Նախագծի ղեկավարման ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ (5000 NOK-ը փոխադրվել է 2011թ.-ից): Սա նախագծի հայկական կողմի համակարգողին, իր հիմնական աշխատանքին զուգահեռ, նախագծի գիտական համակարգման և ղեկավարելու համար հատկացվող տարեկան գումար է,<br>7. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ<br><br>2013թ.-ին<br><br>1. Գրքերի և ամսագրերի գնում և ներմուծում, ծրագրի շրջանակներում ծախսեր հոդվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և թեկնածուական թեզերի |

պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ,

2. Միջազգային կոնֆերանսների, սեմինարների և աշխատանքային հանդիպումների կազմակերպում, ինտերնետային ծախսեր (networking), 120000 NOK-ին համարժեք դրամ: Տվյալ տարվա սեպտեմբերին միջազգային գիտաժողովի կազմակերպում (ինտերնետում կայքի ստեղծում, ինֆորմացիոն թերթիկների տպում, գովազդային պաստառների և այցեքարտերի պատրաստում, թղթապանակների և գրենական պիտույքների գնում ու բաժանում, Ֆուրշետների, բանկետի կազմակերպում, մասնակիցներին օդակայանում դիմավորելու և ճանապարհելու համար մեքենաների պատվիրում, մշակութային ծրագրերի կազմակերպում և այլն):
3. Գործուղման ծախսեր, 28000 NOK-ին համարժեք դրամ: Նորվեգիա են գործուղվելու՝ ծրագրի հայկական կողմի համակարգողը և ծրագրի այլ մասնակիցներ, ինչպես նաև ծրագրում ընդգրկված մագիստրոսներ և ասպիրանտներ:
4. Այլ ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ: Սրանք նախատեսված են ծրագրի կատարման ընթացքում չնախատեսված սարքեր և տեխնիկա գնելու, վերանորոգելու, քիմիական նյութեր և ռեակտիվներ, լաբորատոր այլ պարագաներ գնելու, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ գործուղումների և հանդիպումների կազմակերպման և այլնի համար:
5. Նախագծի ղեկավարման ծախսեր, 25000 NOK-ին համարժեք դրամ: Սա նախագծի հայկական կողմի համակարգողին, իր հիմնական աշխատանքին զուգահեռ, նախագծի գիտական համակարգման և ղեկավարելու համար հատկացվող տարեկան գումարն է,
6. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ

2014թ.-ին

1. Գրքերի և ամսագրերի գնում և ներմուծում, ծրագրի շրջանակներում ծախսեր հոդվածների, ուսումնա մեթոդական ձեռնարկների հրատարակման և մագիստրոսական և թեկնածուական թեզերի պատրաստման համար, 22000 NOK-ին համարժեք դրամ,
2. Միջազգային կոնֆերանսների, սեմինարների և աշխատանքային հանդիպումների կազմակերպում, ինտերնետային ծախսեր (networking), 30000 NOK-ին համարժեք դրամ: Տվյալ [illegible] հանդիպում-



սեմինարի և կլոր սեղանների կազմակերպում (ինֆորմացիոն թերթիկների տպում, այցեքարտերի պատրաստում, թղթապանակների և գրենական պիտույքների գնում ու բաժանում, Ֆուրշետների, բանկետի կազմակերպում, մասնակիցներին օդակայանում դիմավորելու և ճանապարհելու համար մեքենաների պատվիրում, մշակութային ծրագրերի կազմակերպում և այլն):

3. Գործուղման ծախսեր, 28000 NOK-ին համարժեք դրամ: Նորվեգիա են գործուղվելու՝ ծրագրի հայկական կողմի համակարգողը և ծրագրի այլ մասնակիցներ, ինչպես նաև ծրագրում ընդգրկված մագիստրոսներ և ասպիրանտներ:
4. Այլ ծախսեր, 30000 NOK-ին համարժեք դրամ: Սրանք նախատեսված են ծրագրի կատարման ընթացքում չնախատեսված սարքեր և տեխնիկա գնելու, վերանորոգելու, քիմիական նյութեր և ռեակտիվներ, լաբորատոր այլ պարագաներ գնելու, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ գործուղումների և հանդիպումների կազմակերպման և այլնի համար:
5. Նախագծի ղեկավարման ծախսեր, 20000 NOK-ին համարժեք դրամ: Սա նախագծի հայկական կողմի համակարգողին, իր հիմնական աշխատանքին զուգահեռ, նախագծի գիտական համակարգման և ղեկավարելու համար հատկացվող տարեկան գումար է,
6. Վերադիր ծախսեր, 5000 NOK-ին համարժեք դրամ

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, ՀՀ Պետեկամուտների կոմիտե, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, տեղական և արտասահմանյան տպարաններ և հրատարակչություններ, գրքավաճառներ, գրասենյակային պարագաներ վաճառող, տուրիստական և այլ սերվիսներ մատուցող ֆիրմաներ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Իրականացվում է ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների դեկանների և գիտական քաղ.-ն, միջազգ-ին համագործակցության գծով պրոռեկտոր՝ Գ. Գևորգյանի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակը մեկ հաշվետվություն է ներկայացվելու բարձրագույն կրթության բնագավառում միջազգային համագործակցության Նորվեգական կենտրոնին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 713-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N 3/3.8-1/11171-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 20-ի N ՎՄ/3-4/8783-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 01538594) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էնտազիս» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Ադամյան 15, ՀՎՀՀ՝ 01528215) 2012 թվականի հուլիսի 30-ին կնքված հաշիվ-ֆակտուրայում նշված գործարքը, որով նախատեսվում է Աբովյանի հիվանդանոցի տուբերկուլյոզի բաժանմունքի վերակառուցման, ձեռնահարկի օդափոխման համակարգի էլ. գծագրերի, նախահաշվի և նախագծի բազմացման ծառայությունների մատուցում՝ 280.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-714-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N Մ-512-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2012 թվականի օգոստոսի 21-ի N 1/01.3/11325-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N 3/3.8-1/11138-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի24 -ի N ՎՄ/3-4/8955-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում 2012 թվականին ֆինանսավորվող ծրագրի մասին» N Մ-512-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարկոմավտո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00059627) 2012 թվականի օգոստոսի 1-ին կնքված N ԿՀ-ԱՊՁԲ-12/01-2 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով ապրանքի տրամադրում՝ 6.250.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 715 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N Մ-511-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2012 թվականի օգոստոսի 21-ի N 1/01.3/11327-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N 3/3.8-1/-11137-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 24-ի N ՎՄ/3-4/8956-12 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում 2012 թվականին ֆինանսավորվող ծրագրի մասին» N Մ-511-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարկոմավտո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00059627) 2012 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N ԿՀ-ԱՊՁԲ-12/01-1 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով ապրանքի տրամադրում՝ 5.250.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 716-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N Մ-489-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-1/11342-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 16-ի N ՎՄ/3-6/8668-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Հումանիտար օգնություն հայ ժողովրդի համար» («Humanitarian Aid For The People of Armenia») կազմակերպության միջոցներով՝ «Լայթհաուս-Փարոս» հիմնադրամի հասցեով ուղարկված բեռը (916 տեղ, 8522 կգ ընդհանուր քաշով, 545.165 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6.685 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 10-ի «Փարոս» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հույսի ճրագ» ծրագրի մասին» N Մ-489-Ա որոշմամբ (2010 թվականի հունվարի 22-ի N Մ-30-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ ․․․ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

« ԼԱՅԹՀԱՈՒՍ -ՓԱՐՈՍ» Բարեգործական Հիմնադրամի կողմից ստացվող բեռի ցանկ /կոնտեյներ ZCSU8751923/

| | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԵՂԵՐ | Քաշ/ԼԲՍ/ | Արժեքը /ԱՄՆ դոլար/ |
|---|---|---|---|---|
| 1 | Խառը հագուստ | 554 | 10676 | 299,810.00 |
| 2 | Տղամարդու հագուստ | 21 | 424 | 10,600.00 |
| 3 | Կանացի հագուստ (հնամաշ) | 39 | 759 | 18,975 |
| 4 | Հարսի շոր (2 արկղ) և երեկոյան զգեստներ (10 արկղ) | 12 | 452 | 46,025.00 |
| 5 | Մանկական հագուստ | 103 | 1813 | 46,375.00 |
| 6 | Կանացի պայուսակներ | 12 | 218 | 4,285.00 |
| 7 | Խառը կոշիկներ (12 արկղ՝ կանացի, 10 արկղ՝ տղամարդու, 7 արկղ՝ մանկական կոշիկներ) | 29 | 629 | 38,230.00 |
| 8 | Մանկական կոշիկներ (0-5 տարեկան) | 7 | 161 | 5,150.00 |
| 9 | Ձմեռային վերարկուներ և բաճկոններ (մեծահասակների) | 27 | 952 | 23,800.00 |
| 10 | Կարուձևի պարագաներ (ժապավեններ, ձևված կտորներ) | 32 | 659 | 13,795.00 |
| 11 | Գրասենյակային պարագաներ 15 արկղ (մատիտներ, գրիչներ, և այլն), համակարգիչ 5 արկղ (4 ստեղնաշար, 3 մոնիտոր, 1 Pentium 3, 5 Pentium 4) | 20 | 670 | 11,860.00 |
| 12 | Մանկական նստատեղեր և աթոռներ (նախատեսված երեխաներին կերակրելու համար)՝ 6 արկղ և մանեժներ՝ 3 հատ (3 տեղ) | 9 | 180 | 3,050.00 |
| 13 | Մանկական տակդիրներ | 3 | 51 | 1,095.00 |
| 14 | Մանկական դաստիարակչական խաղեր (0-3 տարեկան և դպրոցական պարագաներ 4-6 տարեկան երեխաների համար՝ նախատեսված կախակոթառանների համար) | 8 | 224 | 3,335.00 |
| 15 | Խաղալիքներ | 2 | 93 | 600 |
| 16 | Անկողնային պարագաներ(վերմակներ, դոշակներ, ծածկոցներ)՝27 արկղ և 4 հատ գորգ (4 տեղ) | 31 | 658 | 14,770.00 |
| 17 | 4 անվասայլակ, 3 պլյումինե քայլակներ | 7 | 169 | 3,410.00 |
| | | | | |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ | **916** | **18788** | **545165** |

կամ 8522 ԿԳ

Տնօրեն՝ Ն. Մուրադյան

## «ԼԱՅԹՀԱՈՒՍ-ՓԱՐՈՍ» Բարեգործական Հիմնադրամի կողմից ստացված կոնտեյներ ZCSU8751923 բեռի բաշխման ցանկ
## 916 տեղ /արկղ/

| | Շահառուների ցանկ | Խառը հագուստ /554 արկղ/ | Տղամարդու հագուստ /21 արկղ/ | Կանացի հագուստ /39 արկղ/ | Հարսի շոր (2 արկղ) և երեկոյան զգեստներ (10 արկղ) /12 արկղ/ | Մանկական հագուստ /103 արկղ/ | Կանացի պայուսակներ /12 արկղ/ | Խառը կոշիկներ (12 արկղ՝ կանացի, 10 արկղ՝ տղամարդու, 7 արկղ՝ մանկական կոշիկներ) /29 արկղ/ | Մանկական կոշիկներ (0-5 տարեկան) /7 արկղ/ | Ձմռային վերարկուներ և պիջակներ /27 արկղ/ | Կարուձևի պարագաներ (ժապավեններ, ձևվկված կտորներ) /32 արկղ/ | Գրասենյակային պարագաներ 15 արկղ (մատիտներ, գրիչներ, և այլն), համակարգիչ 5 արկղ (4 ստեղնաշար, 3 մոնիտոր, 1 Pentium 3, 5 Pentium 4)/20 արկղ/ | Մանկական խաղալիքներ և աթոռներ (նախատեսված երեխաների կերակրելու համար)՝ 6 արկղ և մանեժներ՝ 3 արկղ /9 արկղ/ | Մանկական տակդիրներ /3 արկղ/ | Մանկական դաստիարակչական խաղեր (0-3 տարեկան և դպրոցական տարիքի 4-6 տարեկան երեխաների համար՝ նախատեսված նախակրթարանների համար) /8 արկղ/ | Խաղալիքներ /2 արկղ/ | Անկողնային պարագաներ(վերմակներ, դոշակներ, ծածկոցներ)՝27 արկղ և 4 արկղ փոքր /31 արկղ/ | 4 անվասայլակ, 3 պլաստիկե քայլակներ /7 արկղ/ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | |
| | **Արմավիրի մարզ** | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | Գյուղ Պտղունք<br>Տեր և տիկին Ղազարյանների անվ. երկխմբանի մանկապարտեզ (65 սան) | | | | | 4 արկղ | | | | | | | 2 արկղ | | 3 արկղ | | 9 արկղ | | 18 |
| 2 | Պտղունք (100 ընտանիք, 360 հոգի) | 20 արկղ | 4 արկղ | 5 արկղ | | 4 արկղ | 2 արկղ | 3 արկղ | 1 արկղ | 2 արկղ | | | | | | | | | 41 |
| 3 | Նոր Արմավիր համայնքի մանկապարտեզ (50 երեխա 10 աշխատակիցներ) | | | | | 4 արկղ | | | | | | | | | 1 արկղ | | 6 արկղ | | 11 |
| 4 | Մուսալեռ գյուղի մանկապարտեզի (45 սաներ) | | | | | 4 արկղ | | | 1 արկղ | | | | | | 1 արկղ | | 6 արկղ | | 12 |
| 5 | Նոր Արմավիր (80 ընտանիք, 350 հոգի) | 20 արկղ | | | | 5 արկղ | | 2 արկղ | | 1 արկղ | | | | | | | | | 28 |
| 6 | Ջանֆիդա (10 ընտանիք) | 6 արկղ | 2 արկղ | | | 2 արկղ | | | | | | | | | | | | | 10 |
| | **Արագածոտնի մարզ** | | | | | | | | | | | | | | | | | | |
| 7 | Պարտիզակ գյուղ (80 ընտանիք, 375 հոգի) | 30 արկղ | 4 արկղ | 4 արկղ | | 6 արկղ | 2 արկղ | 3 արկղ | 1 արկղ | 5 արկղ | | | | | | | | | 55 |
| | **Արարատի մարզ** | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8 | Փոքր Վեդի (100 ընտանիք, 420 հոգի) | 40 արկղ | 4 արկղ | 4 արկղ | | 5 արկղ | 2 արկղ | 3 արկղ | | 5 արկղ | | | | | | | | | 63 |
| 9 | Մհս միջնակարգ դպրոց (Մասիս քաղաք) | 30 արկղ | | | | 5 արկղ | | | | 1 արկղ | | | | | | | | | 36 |
| | **Տավուշի մարզ** | | | | | | | | | | | | | | | | | | |
| 10 | Սահմանամերձ Դովեղ համայնք (70 ընտանիք, 320 հոգի) | 40 արկղ | 3 արկղ | 4 արկղ | | 4 արկղ | 2 արկղ | 4 արկղ | | 3 արկղ | | | | | | | | | 60 |
| 11 | Դովեղ համայնքի նախակրթարան (60 սան) | 5 արկղ | | | | | | | | | | | | | 2 արկղ | | | | 7 |



| | Շահառուների ցանկ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռու մարզ** | | | | | | | | | | | | | | | | | | |
| | Հովնոր (80 ընտանիք, 380 հոգի) | 20 արկղ | | 3 արկղ | | | | | | | | | | | | | | | 23 |
| | Գյառգյար (100 ընտանիք, 400 հոգի) | 20 արկղ | | 4 արկղ | | | | | | | | | | | | | | | 24 |
| | Կողես (130 ընտանիք, 460 հոգի) | 30 արկղ | | 4 արկղ | | | | | | | | | | | | | | | 34 |
| | **Շիրակի մարզ** | | | | | | | | | | | | | | | | | | |
| | Մայր Արուսյակի Գյումրիի հայկական կենտրոն | 30 արկղ | | | | | | | | | | | | | | | | | 30 |
| | "ՋԱՊԵԼ" բարեգործական հասարակական կազմակերպություն (խիստ կարիքավոր 60 ընտանիք) | 20 արկղ | | | | 5 արկղ | | 2 արկղ | | | | | | | | | | | 27 |
| | "ՌՈՄԵԼԱ" բարեգործական կազմակերպություն (50 ընտանիք) | 20 արկղ | | | | 5 արկղ | | 2 արկղ | | | | | | | | | | | 27 |
| | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարության կողմից ուղարկված ընտանիքներ, սոցիալապես անապահով ընտանիքներ և դպրոցականներ , բնական աղետից, հրդեհներից տուժված ընտանիքներ /հաշմանդամներ/ (100 ընտանիք) | 40 արկղ | 2 արկղ | 3 արկղ | | 10 արկղ | | 2 արկղ | | 2 արկղ | | | | | | | | | 59 |
| | Ֆիզ.անձեր, ովքեր նամակներով և այցելությամբ դիմում են գրասենյակ՝ սոց.անապահով, բնական աղետներից տուժված ընտանիքներ, որոնք համապատասխան գրություններով ներկայանում են գրասենյակ՝ օգնության խնդրանքով) | 70 արկղ | 2 արկղ | 3 արկղ | | 10 արկղ | 2 արկղ | 2 արկղ | 2 արկղ | 4 արկղ | | | 3 արկղ | | | | | 7 արկղ | 105 |
| | Հիմնադրամի շահառուներ, ովքեր ամենամսյա "Դրամական օժանդակություն" են ստանում հիմնադրամում (60 ընտանիք, 200 հոգի) | 30 արկղ | | 2 արկղ | | 10 արկղ | | 2 արկղ | | 2 արկղ | | | | | | | | | 46 |
| | *Շաբաթը 1 անգամ Լայթհաուս [illegible] Սուրբ Գրքի* ուսումնասիրության մասնակիցներ (100 հոգի) | [illegible] արկղ | | | | | | | | | | | | | | | | | [illegible] |
| | Մայրատուն ապաստարան (բռնության զոհ մայրեր և երեխաներ, որոնք ապաստարան են գտել մեր հիմնադրամի ապաստարանում) | 43 արկղ | | 3 արկղ | | 20 արկղ | 2 արկղ | 4 արկղ | 2 արկղ | 2 արկղ | | | 4 արկղ | 3 արկղ | 1 արկղ | 2 արկղ | 10 արկղ | | 96 |
| | Հիմնադրամի գրասենյակ<br>Հիմնադրամի պահեստ խիստ անհրաժեշտ դեպքերի համար | | | | 12 արկղ | | | | | | 32 արկղ | 20 արկղ | | | | | | | 64 |

Հիմնադրամի տնօրեն՝ Ն. Մ[illegible]

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 սեպտեմբերի 2012 թվականի N Մ- 717 - Ա**
**քաղ. Երևան**

**(որոշումն ընդունվել է 2012 թվականի հուլիսի 27-ին)**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԿԱՀՈՒՅՔԻ ԳՆՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 23-ի N 3/3.8-1/9611-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 02/4523-12, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2012 թվականի հուլիսի 25–ի N 01/3.1/3001-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 24-ի N ԱԱ/3-4/7885-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 6.180.000 դրամ արժողությամբ «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի համար կահույքի գնման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված եռակողմ պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով<br>• ամսեկան եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին<br>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի կողմից |

*Ծրագրի ղեկավար* *Արմենուհի Հովաննիսյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 732-Ա**
**քաղ. Երևան**

### «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԵԼԴՔԻՐԽԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 3-ի N 3/3.8-2/10215-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 6 ի N ՎՄ/3 6/8374 12, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 3-ի N 01/3718-12, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի օգոստոսի 6-ի N 101/104.3/4261-12 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 9-ի N 01/15/3246-12 եզրակացություն-ները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 05514397) կողմից իրականացվող՝ 638850 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագիրը (կց-վում է):

2. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազ-մա-կերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմա-կերպության հասցեով՝ Ավստրիայից ստացված բեռը՝ (19394 կգ ընդհանուր քաշով, 6388.5 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5300 եվրոյին հա-մարժեք դրամ, բեռի և բաշխման ցանկը կցվում է, «Շիրակի» Տ/Մ) ներմուծվում է սույն որոշ-ման առաջին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրա-գրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապե-



տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներ-կայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու ու Գեղարքունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ | Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Անահիտ Մխոյանի կողմից
«10» հուլիսի 2012թ.

## «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Ավստրիական Կարիտաս» ԲՀԿ-ի Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի և այլ համագործակից կազմակերպությունների կարիքավոր շահառուներին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Կարիտաս Ավստրիայի Ֆելդքիրխի գրասենյակ<br>Caritas Feldkirch<br>Wichnergasse 22, 6800<br>Feldkirch, Austria |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ<br>Գյումրի, Հ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն<br>ՀՎՀՀ՝ 05514397 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզեր<br>բնագավառը՝ բարեգործական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 6388,50 Եվրո |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում իրականացվող ծրագրերի և այլ համագործակից կազմակերպությունների մոտ 2000 շահառու (ցանկը մանրամասնությամբ կցվում է): |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 3 ամիս, 01.09.2012 - 01.12.2012 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ապրանքի ստացումից և պահեստավորումից հետո կկազմակերպվի պարագաների համապատասխան դասակարգումը՝ ըստ շահառուների ու կենտրոնների: Ապա կկազմակերպվի սննդի տեղափոխումը համապատասխան հաստատություններ («Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի հետևյալ ծրագրերը՝ «Առաջնային առողջության պահպանման կենտրոն», «Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների կենտրոն, «Փոքրիկ Իշխան» երեխաների սոցիալական կենտրոնները Գյումրիում, Վանաձորում, Գավառում և Տաշիրում, ՀԿ-ի կողմից Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում իրականացվող ծերերի աջակցման ծրագրի շահառուներ, Տաշիրի և Աշոցքի տարածաշրջաններում իրականացվող «Ծխական Հասարակական Խորհուրդներ» ծրագրի 10 գյուղերի ծխական համայնքներ, «Արամազդ» ծրագրում ներգրավված 9 փախստական համայնքներ Շիրակի և Գեղարքունիքի մարզերում, Գյումրիի Կաթողիկե Առաջնորդարան, Սեպասարի մանկապարտեզ, Հայկական Կարիտասի գործընկեր «Խաչվող Ուղիներ» ՍՀԿ /որի հետ համագործակցում ենք Վանաձորում Փոքրիկ Իշխան կենտրոնի շրջանակներում/ և «Փարոս» ՀԿ), իսկ հագուստը անհատականորեն կբաշխվի Գյումրու, Վանաձորի և Գավառի ծերերին, ովքեր ներգրավված են «Տնային Խնամք միայնակ ծերերին» ծրագրում: Բաշխումը նախատեսված է իրականացնել սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում: Բաշխման աշխատանքների իրականացման համար ծրագրի ղեկավարի կողմից կկազմվի համապատասխան խումբ՝ բաղկացած ծրագրի սոցիալական աշխատողներից և ծրագրի ղեկավարից: Յուրաքանչյուր ծրագրի/կենտրոնի ղեկավար կստանձնի պատասխանատվություն ապրանքի բաշխման/տեղակայման, մանրամասն անվանական և քաշային հաշվետվությունների տրամադրման համար բաշխման գործընթացից հետո 10 օրվա ժամանակահատվածում:<br>«Հայկական Կարիտաս»-ը ամբողջական հաշվետվություն կներկայացնի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով և բարերար՝ Կարիտաս Ավստրիային: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հագուստ ու սնունդ (մակարոն):<br>Արժեքը՝ 6388,50 եվրո |

| N | Նկարագրություն | Ընդհան. քաշը /կգ/ | Նշումներ | Ընդհանուր գինը, € |
|---|---|---|---|---|
| 1 | Բրդե վերմակներ | 179 | Օգտագործված/ անտահանված | 89.50 |
| 2 | Գուլպաներ | 50 | Օգտագործված/ անտահանված | 15 |
| 3 | Բաճկոններ | 310 | Օգտագործված/ անտահանված | 279 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 4 | Գոտիներ | 25 | Օգտագործված/ անտահանված | 25 |
| | | 5 | Բրդյա վերարկուներ | 200 | Օգտագործված/ անտահանված | 400 |
| | | 6 | Լապշա/մակարոն | 18.600 | Նոր | 5.580 |
| | | | **Ընդհանուր** | **19,364** | | **6,388,50** |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Չի նախատեսվում | | | | |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցություն կիրականացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ; Պետական ինքնակառավարման մարմինների հետ ծրագրի իրականացման վայրերում; Սոցիալական ապահովության տարածքային գրասենյակների հետ; Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի սոցիալական վարչությունների հետ: | | | | |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կիրականացնի «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վարչական խորհուրդը և ավարտից հետո մանրամասն հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ինչպես նաև բարերարին՝ Կարիտաս Ավստրիա: | | | | |

## Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բեռի բաշխման ցանկ

| # | Նկարագրությունը | Լապշա /մակարոն/ | Բրդե վերմակներ | Գուլպաներ /փաթեթ/ | Բաճկոններ | Գոտիներ /փաթեթ/ | Բրդյա վերարկուներ /փաթեթ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Բրուտո քաշը/ կգ | 18600 կգ | 179կգ | 50կգ | 310կգ | 25կգ | 200կգ | 19364.0 |
| | Ինվոյսային արժեքը/եվրո/ 6388.50 | 5580 | 89,50 | 15 | 279 | 25 | 400.00 | 6388.50 |
| 1 | «Տնային Խնամք» Գյումրի | 1400 | 70 | 50 | | 25 | 200 | 1745 |
| 2 | «Տնային Խնամք» Վանաձոր | 1000 | | | | | | 1000 |
| 3 | «Տնային Խնամք» Գավառ | 600 | | | | | | 600 |
| 4 | «Ցերեկային Խնամք» Գյումրի | 2000 | | | | | | 2000 |
| 5 | «Ցերեկային Խնամք» Տաշիր | 600 | | | | | | 600 |
| 6 | «Փոքրիկ Իշխան» Գյումրի | 750 | | | | | | 750 |
| 7 | «Փոքրիկ Իշխան» Վանաձոր | 900 | | | | | | 900 |
| 8 | «Փոքրիկ Իշխան» Գավառ | 400 | | | | | | 400 |
| 9 | «Փոքրիկ Իշխան» Տաշիր | 400 | | | | | | 400 |
| 10 | Առաջնային Առողջության Պահպանման կենտրոն | 2000 | | | | | | 2000 |
| 11 | «Արեգակ կենտրոն», Գյումրի | 400 | | | | | | 400 |
| 12 | Ծխական հասարակական խորհուրդներ/10 գյուղ/ | 3000 | | | | | | 3000 |
| 13 | «Արամազդ» փախստականների ծրագիր/5 ՀԿ/ | 1500 | | | | | | 1500 |
| 14 | Կաթողիկե առաջնորդարանը Գյումրիում, Տաշիրում և Ամասիայում | 2500 | 109 | | 310 | | | 1500 |
| 15 | Սեպասարի մանկամսուրեզ | 250 | | | | | | 250 |
| 16 | «Խաչվող ուղիներ» ՀԿ | 400 | | | | | | 400 |
| 17 | «Փարոս» ՀԿ | 500 | | | | | | 500 |
| | Ընդհանուր | 18600 | 179 | 50 | 310 | 25 | 200 | 19364 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 733-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1125-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 30-ի N 1.1/3.8-1/9997-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-4/8110-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-1125-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2012 թվականի հուլիսի 23-ին կնքված N AT-AU-059-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գործունեության աուդիտի իրականացում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-734-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 3)

(«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 15-ի N ՍՔ/15-1/8034-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 18-ի N 3/3.8-1/10797-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 18-ի N ԴԴ/22/8205-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 17-ի N ՎՄ/3-4/8728-12 եզրակացությունները,*

***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-220-Ա և հունիսի 29-ի N Մ-468-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մաունթ» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Ազատության 3/1, ՀՎՀՀ՝ 00094675) 2012 թվականի հուլիսի 31-ին կնքված N ՀՀ ԱՆԳ-ՇՀԱՊՁԲ-11/16-12/8-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրով ապրանքի հանձնում՝ 30.970.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-735-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 2)

(«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 16-ի N ԱՔ/15-1/8084-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 18-ի N 3/3.8-1/10796-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 18-ի N ԴԴ/22/8163-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 18-ի N ՎՄ/3-4/8786-12 եզրակացությունները,*

***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-220-Ա և հունիսի 29-ի N Մ-468-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Փինկ Ֆլամինգո Գ ԵՎ Ա Կենտրոն» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Սարյան փող. 1/ա, բն. 3 ՀՎՀՀ՝ 02548673) 2012 թվականի հուլիսի 31-ին կնքված N ՀՀ ԱԳՆ-ՇՀԱՊՁԲ-11/16-12/8-3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված ծավալներով, ձևով և ժամկետներում սահմանված բնութագրով ապրանքի տրամադրում՝ 13.300.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ- 736 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)**
(«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 15-ի N ՍՔ/15-1/8035-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 18-ի N 3/3.8-1/10797-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի օգոստոսի 18-ի N ԴԴ/22/8200-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 17-ի N ՎՄ/3-4/8727-12 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-220-Ա և հունիսի 29-ի N Մ-468-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ (քաղ. Երևան, Ամիրյան 1, ՀՎՀՀ՝ 02504956) 2012 թվականի հուլիսի 13-ին կնքված N 634200 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի



նիստի կազմակերպման ծառայությունների ձեռքբերում՝ 222.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ ՍՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2012 թվականի N Մ-737-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի NՄ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 31-ի N 3/3.8-1/10027-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 2-ի N ՎՄ/3-4/8217-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին» N Մ-318-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-738-Ա և 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-862-Ա որոշումների խմբագրություններով) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02508699) 2012 թվականի հուլիսի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «պրոժեկտորի մատակարարում» MEA/GF/PRO-12/01՝ 174750 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 օգոստոսի 2012 թվականի N Մ - 738-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ- 1116 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Զքավոր երեխաների աջակցության ակցիա» Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-1/11298-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 30-ի N ՎՄ/3-4/9132-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Զքավոր երեխաների աջակցության ակցիա» Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝01563564) կնքված՝ ստորև նշված հաշիվ ապրանքագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Զքավոր երեխաների աջակցության ակցիա» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Ծովագյուղի մանկապարտեզի բարեկարգման և կրթության բարելավում բարեգործական ծրագիր» ծրագրի մասին» N Մ-1116-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՐԱՅ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00003891) 2012 թվականի օգոստոսի 24-ի N AM 08001B հաշիվ ապրանքագրով նշված գործարքը, որով նախատեսվում է սառնարանի ձեռքբերում՝ 287500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**6 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-739-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի օգոստոսի 31-ին)**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՐԱԶԴԱՆ» ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ (ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ)» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-1/11306-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 27-ի N 01/5277-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1/06/633-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 31-ի N ԱԱ/3-6/9169-12 և Երևանի քաղաքապետարանի 2012 թվականի սեպտեմբերի 3-ի N 02/16-41272Հ եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 928 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Հրազդան» կենտրոնական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում (առաջին փուլ)» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ձեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2012 թվականի մայիսի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզադաշտի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 395290800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) լուսարձակի մասեր (մեկ տեղ, 20 կգ ընդհանուր քաշով, 20136.90 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 350 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ).

2) պղնձե մալուխ (15 տեղ, 7747 կգ ընդհանուր քաշով, 39739.91 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7835.75 եվրո, «ՄՃՓ» ՏՄ).



3) հալոգենային լամպեր (մեկ տեղ, 56.55 կգ ընդհանուր քաշով, 31554.90 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 57.20 եվրո, «ՄՃՓ» ՏՄ).

4) հալոգենային լուսարձակներ (58 տեղ, 4441 կգ ընդհանուր քաշով, 85247 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5438.75 ԱՄՆ-ի դոլար, «ՄՃՓ» ՏՄ).

5) հալոգենային լամպեր (մեկ տեղ, 15 կգ ընդհանուր քաշով, 1836 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 18.37 ԱՄՆ-ի դոլար, «ՄՃՓ» ՏՄ).

6) հալոգենային լուսարձակներ (35 տեղ, 2789 կգ ընդհանուր քաշով, 57513 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2200.32 ԱՄՆ-ի դոլար, «ՄՃՓ» ՏՄ).

7) էլեկտրական սարքավորումներ (6 տեղ, 6551 կգ ընդհանուր քաշով, 31980.90 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4709.78 ԱՄՆ-ի դոլար, «ՄՃՓ» ՏՄ).

8) պղնձե մալուխ (5 տեղ, 1558 կգ ընդհանուր քաշով, 6848.16 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3433.88 եվրո, «ՄՃՓ» ՏՄ).

9) հոսանքի ավտոմատ անջատիչներ (մեկ տեղ, 30 կգ ընդհանուր քաշով, 1272 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 66.12 եվրո, «ՄՃՓ» ՏՄ).

10) բիտում (44460 կգ ընդհանուր քաշով, 22674.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ).

11) բիտում (67320 կգ ընդհանուր քաշով, 34333.20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ):

4. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ
........... Ռ. Հայրապետյանի կողմից
«05» սեպտեմբեր 2012թ.

«Հրազդան» կենտրոնական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում»

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

(առաջին փուլ)

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Հրազդան» կենտրոնական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն - ՈւԵՖԱ (Շվեյցարիա, 1260 Նիոն Ժենևի փողոց 46) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքում, սպորտի բնագավառում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 928 մլն դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Առաջին փուլով նախատեսված աշխատանքների ավարտը նախատեսվում է մինչև 2013թ. մայիսի 01-ը: Ծրագիրը շարունակական է և ավարտը նախատեսվում է իրականացնել մինչև 2032 թ. դեկտեմբերի 31-ը: |

05. 09 2012թ



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Խաղադաշտի վերանորոգում՝ 183.85 մլն դրամ սկիզբը 01.05.2012թ. – ավարտը 01.05.2013թ.<br>2. Հանդերձարանների և սանհանգույցների վերանորոգում՝ 67.7 մլն դրամ սկիզբը 01.05.2012թ. – ավարտը 01.05.2013թ.<br>3. Բարեկարգման (ասֆալտապատման) աշխատանքներ՝ 40.85 մլն դրամ սկիզբը 01.05.2012թ. – ավարտը 01.05.2013թ.<br>4. Բիտումի ներմուծում՝ 35 մլն դրամ սկիզբը 01.05.2012թ. – ավարտը 01.05.2013թ.<br>5. Լուսավորության համակարգերի սարքավորումների և լուսատախտակների ներմուծում ու մոնտաժում՝ 533 մլն դրամ սկիզբը 01.08.2012թ.– 01.11.2012թ.<br>6. «Հրազդան» մարզադաշտին կից խաղադաշտերի վերանորոգում՝ 56.8 մլն դրամ սկիզբը 01.05.2012թ. – ավարտը 01.05.2013թ.<br>7. Էլեկտրական ենթակայանների վերանորոգում՝ 10.8 մլն դրամ սկիզբը 01.05.2012թ. – ավարտը 01.05.2013թ.: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Էլեկտրական ենթակայանների և հանդերձարանների տանիքների ջրամեկուսացում, հարակից տարածքի ասֆալտապատում՝ 10.8 մլն դրամ,<br>2. Հանդերձարանների պատերի, հատակի սվաղի, երեսպատման, կախովի առաստաղների տեղադրման, օդափոխության համակարգի տեղադրման, սանտեխնիկայի փոխարինման, մետաղապլաստե դռների տեղադրման և էլեկտրամոնտաժային աշխատանքներ՝ 31.7 մլն դրամ<br>3. Հասարակական սանհանգույցների ապամոնտաժում՝ նորի տեղադրում, կախովի առաստաղների, մետաղապլաստե դռների, տեղադրում սալիկապատման և այլ ներքին հարդարման աշխատանքներ՝ 36 մլն դրամ<br>4. Մարզադաշտի վերանորոգում - հողային աշխատանքներ՝ դրենաժային համակարգի վերանորոգում, խաղադաշտի գրունտի նախապատրաստում և չիմապատման աշխատանքներ, պաշտպանիչ ցանցերի տեղադրում, ոռոգման համակարգի պարագաների ձեռք բերում, պոմպակայանների և խորքային հորի կառուցման աշխատանքներ՝ 183.85 մլն դրամ<br>5. Ասֆալտապատման աշխատանքներ՝ 40.85 մլն դրամ<br>6. «Հրազդան» մարզադաշտին կից մարզումային դաշտերի վերանորոգման (հողային, տրանսպորտային, չիմապատման, մետաղական ցանկապատի կառուցման և տեղադրման աշխատանքներ) 56.8 մլն դրամ,<br>7. Բիտումի ներմուծում՝ 35 մլն դրամ<br>8. Լուսավորության համակարգերի մոնտաժման աշխատանքներ՝ 18 մլն դրամ<br>9. Լուսավորության համակարգերի սարքավորումների ներմուծում՝ 300 մլն դրամ:<br>10. Լուսատախտակների ներմուծում՝ 215 մլն դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՈՒԵՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյանը ------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 օգոստոսի 2012 թվականի N Մ-740-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 3/3.8-1/11299-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 31-ի N 01/5401-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 28-ի N ՖԲ/ԱնՄ-5/5995-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 28-ի N ՎՄ/3-4/9029-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 2585920 դրամ ընդհանուր արժեքով «Բնակելի տան վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2012 թվականի հուլիսի 31-ին կնքված՝ N 020712 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքի 2-րդ փողոցի 6-րդ տան տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 2585920 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

*Դիակոնիա բարեգործական հիմնադրամի*

*տնօրեն Բ. Զամբազյանի կողմից*

«24»-ը օգոստոսի 2012թ.

## «Բնակելի տան վերանորոգում»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Լոռու մարզ, գյուղ Գոգարան, 2-րդ փ. 6 տուն<br>Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հոլանդիայի «Մենսենկինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդերլանդներ, ք. Հարդերվայք 3842 DR, Օուստայնդե 23) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ ( ՀՀ, ք. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ 00068196) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գյուղ Գոգարան, 2-րդ փ. 6 տուն<br>Սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2585920 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Սոցիալապես անապահով ընտանիք՝ Ալեքսանյան Ելենա (անձնագիր՝ AK 0364059, տրվ. 19.08.2009թ. 052 կողմից հեռ. 094.84.24.23) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ. օգոստոսի 1-ից մինչև 2012թ.-ի սեպտեմբերի 15-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ծախսերը, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2012թ. օգոստոսի 1-ից մինչև 2012թ. սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում բնակելի տան տանիքի վերանորոգման և հյուրասենյակի ու միջանցքի վերանորոգման աշխատանքներ՝ 2585920 դրամ ընդհանուր արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակելի տան տանիքի վերանորոգման և հյուրասենյակի ու միջանցքի վերանորոգման իրականացման պայմանագիր, որի արժեքը կազմում է 2585920 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի մարզպետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունների ներկայացում «Մենսենկինդերեն» բարեգործական հիմնադրամին<br>Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում Հայաստանի Հանրապետության Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին |

Կազմեց՝ «Դիակոնիա» բ/հ-ի փոխտնօրեն Վ. Ավագյան

(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**7 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-741-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի օգոստոսի 31-ին)**
**քաղ. Երևան**

### «ՔՐՈՆԻՄԵՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴԻԼԻՋԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի օգոստոսի 29-ի N 3/3.8-1/11217-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 01/5384-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի օգոստոսի 29-ի N ՖԲ/ԱՍՄ-5/6023-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի օգոստոսի 28-ի N ՎՄ/3-4/9022-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Այգեստան 5-րդ փողոց, տուն 15, ՀՎՀՀ՝ 02600555) իրականացվող՝ 27 մլն դրամ ընդհանուր արժեքով «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԲԱՍՊԵՏ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07608491) 2012 թվականի հուլիսի 24-ին կնքված՝ N CCF-1-CT/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 25004290 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամին՝



1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ԽՈՒՄԲ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Քրոնիմետ բարեգործական հիմնադրամի

Տնօրեն Աննա Մեղրակյան

05 սեպտեմբերի 2012թ.

«Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի [illegible] մասնակի վերանորոգում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է փոխել «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի բոլոր մասնաշենքերի հին դռներն ու պատուհանները մետաղապլաստե դռներով և պատուհաններով, ինչպես նաև վերանորոգել հաստատության մարզադահլիճը: Մարզադահլիճում կկատարվեն ընդհանուր հարդարման աշխատանքներ, հին հատակը կփոխարինվի վինիլային ծածկույթով, կվերանորոգվի հանդերձարանը, կփոխարինվեն դռներն ու պատուհանները, կկատարվի արտաքին պատի ջրամեկուսացում դրսից: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝55-43-05, 098 98-99-13 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝55-43-05, 098 98-99-13 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Քաղաք Դիլիջան, «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ: Բնագավառը՝ կրթություն, սոցիալական ապահովություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 27.000.000 (քսանյոթ միլիոն) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Անհրաժեշտ գումարները առկա են հիմնադրամի հաշվին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2012թ.-ի հոկտեմբերի 1-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության» ՊՈԱԿ, հասցեն՝ ք.Դիլիջան, Կամոյի 37 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ.-ի հուլիսի 30-ից հոկտեմբերի 1-ը |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է իրականացնել վերանորոգման աշխատանքներ 2012թ.-ի հուլիսի 30-ից մինչև հոկտեմբերի 1-ը: Մարզադահլիճի վերանորոգման (բացի հատակի ծածկույթից), պատուհանների և դռների փոխարինման համար պայմանագիր է կնքվել «Բասպետ» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 25.004.290 (քսանհինգ միլիոն չորս հազար երկու հարյուր իննսուն) դրամ, որից մոտ 17.500.000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ կկազմի նյութական մասի արժեքը, իսկ մոտ 7.500.000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ կծախսվի շինարարական աշխատանքների կազմակերպման վրա: Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2012թ.-ի սեպտեմբերի 24-ը: Մարզադահլիճի վինիլային հատակի տեղադրման համար կկնքվի պայմանագիր ևս մեկ կապալառուի հետ, որի արժեքը կկազմի մոտ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հայուր հազար) դրամ, որից մոտ 1.200.000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ կկազմի նյութական մասի արժեքը, իսկ 300.000 (երեք հարյուր հազար) դրամ կծախսվի շինարարական աշխատանքների կազմակերպման վրա: Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2012թ.-ի հոկտեմբերի 24-ը: Շինանյութերի առանձին ձեռքբերումներ և այլ աշխատանքներ ծրագրով չեն նախատեսվում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Բասպետ» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 25.004.290 (քսանհինգ միլիոն չորս հազար երկու հարյուր իննսուն) դրամ: Մարզադահլիճի վինիլային հատակի տեղադրման համար կկնքվի պայմանագիր ևս մեկ կապալառուի հետ, որի արժեքը կկազմի մոտ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հայուր հազար) դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Շինարարական աշխատանքների վերահսկողությունը կիրականացվի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Ծրագրի իրականացման հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |